

1194

613.8

Q-43

2010

2002

Առաջին քառորդը

613.8  
2-43

ԹԱԴԵԼՈ ԶԱԳՈՐԵԱՅ

# ԱՄԱԿՍՆԱԿԱՆ

ԱՌԱՋԱՊԱՀԱԽՈՒԹԻՒՆ

(Արտադրական «ՄՈՒՐՃ» ամսագրից)

ԹԻՖԼԻՍ

Տպարան և գր. Ռուբենեանցի

Տիպոր. Մ. Ճ. Դ. լու լու Գօլ. լր. ճ. № 41.


1897

Թ. ԹԵՂԻՍ ԶԱՔՈՐԵՍՆՅ

613.8  
9-43

610  
82-24

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱԽՈՂ ԶԱՊԱՀՈՒԹԻՒՆ



(Որոշակի «ՈՊՐՃ» ամսագրից)

15138

Врачъ Т. Захарянъ  
Гигіена брака

Թ. ԹԵՂԻՍ  
Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի  
Տպогր. Մ. Դ. Ռոտինյանց, Գօլ. պր. 1. № 41.

1897

## ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ա.մուսնութեան նպատակը գիտութեան տեսակէտից:—Ճամանակակից հասարակութեան հայեացքը ամուսնութեան վրայ:—Առողջապահական պայմանների նշանակութիւնը ամուսնութեան խնդրում:—Ա.մուսնացողների հասակը:—Վաղաժամ ամուսնութիւն:Տարաժամ ամուսնութիւն:—Ա.մուսինների հասակի համաչափութիւնը:—Արիւնակից ամուսնութիւն:—Հասի եւ չմասի խնդիրը:—Խնամէական եւ հոգիւոր ազգակցութեան նշանակութիւնը ամուսնութեան խնդրում:—Ամուսնացողների առողջութեան վիճակը:—Ճկերքը, գինեմլութիւնը, սիֆիլիսը, ջգայն եւ հոգեկան հիւանդութիւնները եւ նրանց ազդեցութիւնը ամուսինների եւ սերնդի վրայ:—Սէրը իբրև ամուսնական առողջապահութեան պայմաններից մէկը:

Ա.

Գիտութեան համար ամուսնութիւնը միայն մի նպատակ ունի. և այդ նպատակն է պահպանել սերնդի գոյութիւնը երկու տարրեր սեռերի միաւորութեան միջոցով: Այդ նպատակը կարող է իրագործել միայն այն ժամանակ, երբ ամուսինները ընդունակ են ոչ միայն որդենութեան այլ և առողջ ու զօրաւոր սերունդ առաջացնելու: Գիտութեան այդ պահպանը ընդհանուր է ոչ միայն բոլոր ազգերի և բոլոր ժամանակների համար, այլ նաև բոլոր կենդանական և բուսական տեսակների համար: Այդ պա-

հանջը նոյն իսկ բնութեան պահանջն է և նրա ան-  
խախտելի օրէնքներից մէկն։ Ամեն մի ասուսնութիւն,  
որ անընդունակ է որդեծնութեան և կամ որից  
կարող է միմիայն թոյլ և հիւանդուս սերունդ առա-  
ջանալ, անհամապատասխան է այն ընդհանուր բնա-  
կան օրէնքին, որը ձգտում է պահպանել սերնդի ան-  
ընդհանուս շարունակութիւնը։ Այդպիսի ամուսնու-  
թիւնը գիտութեան տեսակէտից պէտք է համարել  
անխորհուրդ և ապօրինի։

Բնութեան օրէնքներից ոչ մէկն այնպէս ոտ-  
նակոխ չէ եղել ժամանակակից հասարակութեան մէջ  
ինչպէս ամուսնութիւնը։ Մեծամասնութեան համար  
ամուսնութիւնը դարձել է միայն անձնական հաճոյ-  
քի, վաւաշոտութեան խնդիր։ շատերի համար նա  
միայն մի միջոց է անձնական ստոր շահերի, կա-  
րիերացի և ուրիշ այլ տեսակ նպատակների հասնե-  
լու համար։ Սերնդի հարցը ամենից քիչ տեղ է բըռ-  
նում ժամանակակից ամուսնութեան խնդրում։ Փե-  
սազի և հարսնացուի ընտրութիւնը կատարում է  
աչքի առաջ ունենալով ոչ թէ նրանց մարմնական  
և հոգեկան կարողութիւնները, նրանց առողջու-  
թիւնը, նրանց որդեծնութեան ընդունակութիւնը,  
այլ ամենից առաջ նրանց նիւթական կարողութիւնը,  
ժագումը, պաշտօնը և ուրիշ այլ տեսակ խնդիրներ։  
Այդպիսի ընտրողութեան հետեանքը լինում է այն,  
որ ամուսնութիւնը կորցնում է իւր բարձր նշանա-  
կութիւնը և, փոխանակ նպաստելու սերնդի բագ-

մանալուն և ուժեղանալուն, ընդհակառը նպաստում  
է նրա թուլանալուն և անընդհատ սպառման։ Ժա-  
մանակակից ազգերը, ասում է Սպենսէրը, աւելի  
շատ են մտածում խոզերի սերունդը բազմացնելու  
և ազնըւացնելու մասին, քան թէ մարդկացին սե-  
րունդը։ Նրանք կատարելազործում են մեքենաները,  
ազնւացնում են գետնախնձորը, զուգաւորելով եղ-  
ների և ձիերի ազնիւ տեսակները առաջացնում են  
կենդանիների ընտիր սերունդներ, և միենոյն ժամա-  
նակ բոլորովին անուշազիր են թողնում մարդկացին  
սերունդը։ Եւ այդ անուշազիրութեան հետեանքը  
լինում է ազգերի աստիճանաբար նւազումը, նրա  
մարմնական և հոգեկան կարողութիւնների անկումը։

Եկեղեցին և պետական օրէնտրութիւնը վերց-  
նելով ամուսնական խնդիրը իրանց իրաւասութեան  
տակ և ենթարկելով այլ խնդիրը այլ և այլ պա-  
հանջների, միենոյն ժամանակ շատ քիչ ուշադրու-  
թիւն են դարձել այն պահանջների վրաց, որոնք վե-  
րաբերում են ամուսնական առողջապահութեան։  
Մինչդեռ նոյն իսկ պետութեան շահերը պահան-  
ջում են, որ ամուսնութիւնը ամենից առաջ ընդու-  
նակ լինի պատրաստել պետութեան համար առողջ  
և ուժեղ քաղաքացիներ։ Սերնդի խնդիրը չէ  
վերաբերում միմիայն ամուսններին այլ և հա-  
սարակութեան, այլ և ամբողջ պետութեան։ Առան-  
ձին առանձին անհատների կարողութիւնից է կախ-  
ւած հասարակութեան կարողութիւնը։ Եթէ այդ

անհատները զօրաւոր և առողջ են՝ զօրաւոր և առողջ է նաև ամբողջ հասարակութիւնը. և միմիայն այդ տեսակ հասարակութիւնը կարող է աճել և զարգանալ: Հասարակական առողջութիւնը, առում է լրդ Բիկոնսֆիլդը 18<sup>95</sup> թւին իւր պարլամենտական ճառի մէջ, ազգերի երջանկութեան և պետութիւնների զօրաւորութեան հիմքն է. ամեն մի տէրութեան ամենագլխաւոր և առաջին հոգոր ակտը է լինի հասարակութեան առողջութիւնը: Առանց հասարակական առողջութեան չկայ հասարակական երջանկութիւն: Ազգերի քաղաքական և տնտեսական բարօրութիւնը կախուած է առողջ բանուրներից և առողջ զինւորներից: Առողջութիւնը ազգերի և պետութիւնների գոյութեան և զարգացման առաջին պայմանն է:

Եւ որովհետեւ առողջ սերունդ կարող է առաջանալ միմիայն այն ամուսնութիւններից, որոնք համապատասխան են առողջապահութեան պահանջներին, այդ պատճառով ոչ միայն ցանկալի, այլ նաև անհրաժեշտ է, որ ամուսնական խնդրում եկեղեցին և պետական օրէնսդրութիւնը զեկավարւեն առողջապահութեան մշակած ցուցմունքներով: Այն ժամանակ եկեղեցու և պետական օրէնսդրութեան սահմանած օրէնքները հաստառած կը լինեն ամուր հիմքերի վրայ և տեղիք են տալ այն բազմաթիւ տարածականութիւններին ու կամացականութիւններին,

որոնց ենթակայ է ամուսնութեան խնդիրը բոլոր ազգերի և բոլոր դաւանութիւնների մէջ: Վերջին ժամանակ արևմտեան ազգերի մէջ արդէն նկատելի է մի զօրաւոր շարժում, որը ձգտում է ամուսնական խնդիրը հիմնել գլխաւորապէս առողջապահութեան պահանջների վրայ: Պարիզում գումարւած միջազգային ժողովը, որ տեղի ունեցաւ այս 1896 թ. սկզբներին և որի նպատակն էր կանանց իրաւունքների պաշտպանութիւնը, ի միջի այլոց վճռեց առաջարկել բոլոր ընտանիքներին, որոնց մէջ գտնուում են հարսնացու օրիորդներ, որ պահանջեն վեսայացուներից առողջութեան վկայագիր: Այդ վճռի նպատակն է արգելք լինել զանազան հիւանդութիւնների և մանաւանդ վեներական և հոգեկան հիւանդութիւնների տարածման:

Ամերիկայի Connecticut նահանգում արդէն օրէնք է հաստառած, որ արգելում է ջղալին և հոգեկան հիւանդներին ոչ միայն ամուսնանալ այլ և սեռական յարաբերութիւն ունենալ: Այդ օրէնքի գէմ մեղանչողները ենթարկում են երեք տարի ժամանակով բանտարկութեան, իսկ այդ անսակ ամուսնութիւններին նպաստղները 1000 դոլարից ոչ պակաս տուգանքի և կամ սոցնպէս բանտարկութեան մի տարի ժամանակով:

Այդ օրինակները ցոյց են տալիս, որ կամաց կամաց մօտենում է այն ժամանակը, երբ բժշկականութիւնը և առողջապահութիւնը սկսում են

արդէն տարածել իրենց պահանջները ամուսնական խնդրի վրայ, որը մինչև այսօր ամբողջապէս կախած էր պետական օրէնսդրութեան, եկեղեցու և ժողովրդական աւանդութիւնների իրաւասութիւնից։ Եւ իսկապէս շատ տարօրինակ և զարմանալի է որ այն ժամանակ, երբ նիւթական կարողութիւնը, ծագումը, աստիճանը, դէմքի գեղեցկութիւնը և մինչև անգամ խօսելը, պարելը և ուրիշ այդպիսի յատկութիւնները ահապին դեր են կատարում ամուսնութեան ինդրում, միւս հողմից ընտանեկան կեանքի առողջապահական պայմանները, ամուսնացողների Փիզիկական և հոգեկան յատկութիւնները կամ բոլորովին ուշադրութեան չեն առնեում և կամ շատ քիչ նշանակութիւն են տալիս նրանց։ Մինչդեռ այդ վերջին պայմանները ամենադլիսաւոր հիմքն են կազմում ընտանեկան երջանկութեան և բախտաւորութեան։ Պրոֆէսոր Ռիբբինդի ասելով, երբ ամուսնութեան երջանկութիւնը խախտում է առողջապահական պայմանների բացակայութեան շնորհիւ, այն ժամանակ ոչ մի եկեղեցական և ոչ մի օրէնսդրական միջամառութիւն չէ կարող վերականգնել այդ խախտած երջանկութիւնը։ Համոզւելու համար թէ ինչքան խորին ճշմարտութիւն է պարունակւած այդ խօսքերի մէջ, բաւական է միայն մի հարեւանցի ակնարկ ձգել ժամանակակից ընտանիքների վրայ, որտեղ այնպէս անխնայ կերպով ստնակու են եղած առողջապահութեան պահանջները։

Ամեն մարդ, որ մտնում է ամուսնութեան լուծի տակ, պէտք է լաւ իմացած լինի, որ նա իւր վրայ աւնում է որոշ պարտականութիւններ և որոշ պատասխանատւութիւն թէ դէպի իւր ամօւսինը, թէ դէպի իւր սերունդը և թէ դէպի հասարակութիւնը։ Այդ պարտականութիւնները նա կարող է բարեխղճութեամբ կատարել միայն այն ժամանակը, երբ ամուսնական ընտրութիւնը կատարում է այն պահանջների համեմատ, որ մշակել է բժշկական գիտութիւնը ամուսնական խնդրի համար։ Հակառակ դէպիքում նա մեզանչում է թէ իւր խելքի, թէ իւր գաւակների և թէ մարդկութեան առաջ։

Եկեղեցին և պետական օրէնսդրութիւնը, որոնք ամուսնութեան օրինաւորութեան համար անհրաժեշտ են համարում ծննդական, ծառացութեան, և ուրիշ տեսակ վկայականներ, ամենից առաջ և ամենից աւելի պէտք է պահանջնեն ամուսնացողներից բժշկսկան վկայական—ընդունակ են արգեօք ամուսնացողները առողջ ընտանիք կազմելու։ ընդունակ են որգեծնութեան, ընդունակ են հասարակութեան համար առողջ և ռոժեղ անդամներ առաջացնելու։ Սուանց այդ պայմանների ոչ մի ամուսնութիւն չպէտք է տեղի ունենայ, և եթէ տեղի է ունեցել, պէտք է իրաւունք տալ լուծելու։

Բժիշկ Պարգամինը զարմանալով է վիշում, որ այն ժամանակ, երբ մեր օրինութիւնները և երիտասարդները մի հատ կորսէտ կամ մի հատ գլխարկ ընտա-

բելու համար տաս անգամ՝ քննում, դատում ու կշռում են, միւնոյն ժամանակ այնպիսի թեթևութիւն են ցոյց տալիս ամուսնական ընտրութեան խնդրում, որ մտածող մարդը մնում է շւարած։ Այդ առաջնում է նրանից, որ ամուսնական առողջապահութեան գաղափարը գեռ շատ թոյլ է մեր մէջ։ Ժամանակակից հասարակութիւնը սովորել է նայել ամուսնութեան վրայ ինչպէս մի անձնական հաճոցքի կամ շահասիրական խնդրի վրայ, և եկեղեցական ու պետական օրէնքները ոչ միայն չեն դատապարտում այդ հայեացքը, ոչ միայն արգելք չեն լինում վնասակար ամուսնութիւնների կատարելուն, այլ շատ անգամ նաև ակամաց նպաստում են նրանց գոյութեան։ Այդպիսով, բացի նրանից, որ խախտում է ընտանեկան կեանքի բարօրութիւնը, այլ և, ինչպէս ցոյց է տալիս զիտութիւնը, մարդկացին ցեղը սկսում է կամաց-կամաց նւազել, թուլանալ, ախտաւորել և տեղի տալ բիոլոգիական այն անողոք օրէնքի առաջ, որը կոշտում է սերհատութիւն կամ վատասեռութիւն (վարութեան, dégénérescence<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Զպէտք է շփոթել իրար հետ այլասեռութիւն և վատասեռութիւն բառերը, որոնք զիտութեան մէջ բոլորովին տարբեր գաղափարներ են արտաքարում։ Այլասեռել նշանակում է կորցնել իւր ցեղական առանձնաշատկութիւնները և ստանալ մի ուրիշ ցեղի աստկութիւն։ օրինակի համար, գայլը զանազան հանգամանքների ազդեցութեան

Անցնենք այժմ՝ ամուսնական առողջապահութեան պայմաններին։

Բ.

Ամուսնութեան առաջին պայմանն է ամսանացողների հասակը։ Գիտութիւնը և վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հասակը մեծ նշանակութիւն ունի թէ որդեծնութեան և թէ ամուսինների ու նրանց զաւակների առողջու-

տակ կարող է ավասեռւել և դառնակառակը, շտանը երկար ժամանակ ապրելով վայրենի դրութեան մէջ, մի քանի սերնդից էնտու կարող է փոխել և դառնալ գալը. այդ կը լինի ավասեռութիւն (վարութեան)։ Ավասեռութիւնը կարող է կատարել ինչպէս դէպի լաւը այնպէս և դէպի վատը. Վատասեռութիւնը ցոյց է տալիս տեղական չատկութիւնների վատթարանալը, արատաւորելը։ Եթե մի կենդանի կամ մի մարդ սերնդից սերունդ ժառանգաբար սկսում է թէ ֆիզիկապէս և թէ հոգեաէս թուլանալ և պակասաւորել՝ այդ նշանակում է, որ նա վատասեռում է (վարութեան)։ վատասեռութիւնը միշտ վերջանում է նորանով, որ վերջ ի վերջու սերունդը անընդունակ է դառնում որդեծնութեան և սպառում է. սերնդի այդ աստիճանաբար սպառումը կոչում է սերհատութիւն (վարութեան)։ Դրականութեան մէջ շատ անգամ կամենալով ցոյց տալ ժամանակակից սերնդի բարութական ապականութիւնը՝ անւանում են նորան ավասեռւած սերունդ. այդ սիսալ է. պէտք է ասել վատասեռուած սերունդ, վատասեռուած անհատ, վատասեռուող հասարակութիւն և այն,

թեան համար Զանազան ազգերի և զանազան դաւանութիւնների մէջ գոյութիւն ունեն զանազան օրէնքներ ամուսնութեան հասակի վերաբերութեամբ Ընդհանրապէս տաք երկներում թուլառում է ամուսնանալ աւելի մատաղ հասակում, իսկ հիւսիսացին ցուրտ երկներում աւելի ուշ հասակում Ացդպէս օրինակ, մինչեւ Խուսաստանի հիւսիսացին նահանգներում պետական օրէնսդրութիւնը սահմանել է տղայի համար 18, իսկ աղջկայ համար 16 տարի, Անդրկովկասի ժողովրդին թուլառում է ամուսնանալ 15 և 13 տարեկան հասակներում Գերմանիայում պահանջում է տղայի համար 19 տարի, աղջկայ համար 15, Աւստրիայում տղայի համար 20, աղջկայ համար 16 տարի. Ֆրանսիայում տղայի համար 19, իսկ աղջկայ համար 15 տարի. Սպանիայում և Յունաստանում տղայի համար 14, իսկ աղջկայ համար 12 տարի. իսկ աւելի ևս տաք երկներում, օրինակի համար Հնդկաստանում և Աֆրիկայում, թուլառում է մինչեւ անգամ 10—12 տարեկան տղաներին ամուսնանալ 8 տարեկան աղջկերանց հետ. Մեր եկեղեցու օրէնքով թուլառում է ամուսնանալ եթէ փեսան է «մի պակաս քան զորեքտասան ամն և հարսն զերկոտասան»: Բոլոր այդ հասակները, որոնք սահմանւած են հարիւրաւոր տարիներ առաջ, միանգամայն անհամապատասխան են զիտութեան պահանջներին: Բարեբախտաբար համարեա ոչ մի աեղ չեն օգտում

օրէնսդրութեան այդ իրաւունքներից և ժողովուրդը, որ շատ անգամ բիոլոգիական խնդիրներում առաջնորդում է միմիայն իւր բնագդումով, վաղուց արդէն հասկացել է, որ օրէնքի որոշած հասակը բաւարար չէ ամուսնութեան և սերնդի պահպանութեան համար:

Վաղաժամ՝ ամուսնութեանը ամենից առաջ վնասակար ազդեցութիւն է զործում նոյն իսկ ամուսինների առողջութեան վրայ: Անշափահաս ամուսինները աւելի շուտ են թառամում, աւելի թույլ են լինում և աւելի հեշտ են ենթարկում զանազան հիւսնդրութիւնների: Վիճակագրական տեղեկութիւնները ապացուցանում են, որ 15—19 տարեկան հասակում մարդու զնացած կանանց մէջ մեռնողների թիւը երկու անգամ աւելի է քան թէ նոյն հասակի օրիորդների մէջ: Բժիշկ Բերտիլիոնի վիճակագրութիւնը Ֆրանսիայի կանանց վերաբերութեամբ ցոյց է տալիս, որ այն ժամանակ, երբ 20 տարեկանից ցետոց մարդու զնացած կանացք տալիս են միայն  $70/0$  մահ, այդ հասակից առաջ ամուսնացողների մահը հասնում է մինչեւ  $50/0$ : Միւս կողմից գիտութիւնը ապացուցանում է, որ օրէնքով թուլառած հասակում օրիորդները դեռ ևս ֆիզիկապէս բոլորովին անպատճառ են այն ծանրութիւնների համար, որոնք կապւած են ցուրթեան, որդենութեան և արիւնուութեան հետ: Ացդ բոլորի համար պահանջում է որոշ չափի ֆիզիկական

(մարմնի) ոյժ, կազմւածքի ամրութիւն և ծննդական գործարանների յայտնի զարգացում, որոնք չեն կարող գոյութիւն ունենալ 12—14 տարեկան հասակում: Եթէ մինչև անդամ թողլ տանք, որ հարիւրաւոր տարիներ առաջ մարդու ֆիզիկական զարգացումը աւելի վաղ էր կատարում, այժմ՝ այնուամենայնիւ երբ կեանքի պայմանները խստացել են, երբ ժամանակակից կուլտուրան նշանաւոր կերպով յետաձգել է ֆիզիկական զարգացման ժամանակամիջոցը, վերոցիշեալ օրէնսդրութիւնները այլ ես կորցնում են իրենց դոյլութեան իրաւունքը: Բացի ֆիզիկական զարգացումից, ժամանակակից կեանքը պահանջում է նաև որոշ աստիճանի մտաւոր զարգացում, առանց որի չի կարող խօսք լինել ընտանեկան երջանկութեան մասին: Իսկ այդ զարգացումը նոյնպէս պահանջում է տարիներ, որոնց թիւը աւելի է քան այն հասակը, որ եկեղեցին և պետութիւնը թողլարում են ամուսնութեան համար:

Անչափահաս ամուսնութիւնը մնասակար է նաև տղամարդկանց առողջութեան համար: Ֆրանսիացում 10 տարւայ ընթացքում կատարած նկատողութիւնից երեսում է, որ 15—21 տարեկան հասակում ամուսնացած հազար տղամարդից մեռնողների թիւը համանում է 29 հոգու, մինչդեռ նոյն հասակի ամուսիներից մեռնում են հազարից միայն 6 հոգի, մեռից ֆրանսիացի գիտական ապացուցանում է, որ 16—20 տարեկան հասակում ամուսնացածները ութ-

անդամ աւելի մահ են տալիս, քան թէ նոյն հասակի ամուրիները: Ըստհակառակը 21—25 տարեկան հասակում ամուսնացածների մէջ մեռնողների թիւը աւելի նւազ է, քան ամուրիների մէջ. սկսած այդ հասակից ամուսնացածները աւելի քիչ են հիւանդանում և աւելի քիչ են մեռնում քան չամուսնացածները: Նոյնը ապացուցանում են նաև ուրիշ երկրներում կատարած վիճակագրական տեղեկութիւնները: Այդ տեղեկութիւններից պարզ երեսում է, որ անչափահաս ամուսինները մեռնում են նոյն չափով, ինչ չափով և ծերունիները:

Դնչափահաս ամուսինները մեռնում են գլխաւորապէս կազմւածքի ընդհանուր թուլութիւնից, որ անընդունակ է դարձնում նրանց դիմագրելու հիւանդութիւններին և մահւան. Իսկ այդ թուլութիւնը հետևանք է վաղաժամ սեռական յարաբերութիւնների:

Ինչքան աւելի շուտ է սկսւում մարդու սեռական կեանքը, այնքան աւելի վաղ է սկսւում նաև կազմւածքի թառամումը. և թառամումը տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական, այլ և մտաւորական կարողութիւնների կողմից: Դեռ ես հին ժամանակներում յայտնի յոյն բժիշկ Սրբեթէոսը նկատել էր, որ «երիտասարդները, վաղաժամ սեռական յարաբերութիւնների շնորհիւ, ստանում են ծերի կերպարանք, գեղնում են, դառնում են քնատ, ծոց, դանդաղկոտ, թուլամիտ և մինչև անդամ ապուշ».

Նրանց մէջքը ծուռում է և թուլացած ոտները դըմարութեամբ են կրում իրենց վրայ մարմնի ծանրութիւնը։ Անզլիացի յայտնի փիլիսոփայ Բէկոնը ասում է. «վաղահաս սեռական յարաբերութիւնը, երիտասարդ հասակում, դաւադրութիւնը է ծերութեան հասակի դէմ։ Առաւօտւաչ գւարճութիւնները շատ թանգ են նստում մեզ երեկոյեան պահին։

Սնժամանակ ամուսնութեան վխասակար ազդեցութիւնը, բացի ամուսիններից, տարածւում է նաև նրանց սերնդի վրայ։ Ամենից առաջ այդ ազդեցութիւնը երևում է նրանց ծննդական կարողութեան մէջ։ Անչափահաս ամուսինները մեծ մասամբ կամ անընդունակ են լինում յղութեան և կամ շատ յաճախ վիժում են։ Նրանց սեռական անդամները դեռ ևս հասած չլինելով կատարեալ զարգացման, շնորհիւ անժամանակ սեռական յարաբերութեան, ենթարկւում են զանազան հիւանդութիւնների, որոնք պատճառ են լինում ժամանակաւոր և կամ մշանցենական ամրութեան։ Բացի սրանից, նրանց կազմւածքը, ինքը դեռ ևս կարօտ լինելով զարգացման, չի կարող աւելորդ հիւթ մատակարարել նոր էակ կազմակերպելու համար։ Եւ եթէ այդ տեսակ ամուսնութիւններից ծնուռում են զաւակներ, այդ գաւակները լինում են մեծ մասամբ թոյլ, փոքրահասակ և հիւանդութ Անչափահաս ամուսինների սերունդը շատ աւելի ենթակայ է զանազան հիւանդութիւնների և մահւանքան թէ այն ծնողներինը, որոնք արդէն գտնուում

են ֆիզիկական կատարեալ զարգացման աստիճանի վրայ։ Այս է պատճառը, որ միւնոյն ծնողների զաւակները շատ անդամ տարբերում են մէկմէկուց իրենց թէ ֆիզիկական և թէ մոաւոր կարողութիւններով։ Անդրանիկ զաւակները, որոնց յղութիւնը տեղի է ունեցել ծնողների անչափահաս հասակում, մեծ մասամբ լինում են թոյլ, հիւանդութ և շատ անդամ մեռնում են մանուկ հասակում. մինչդեռ միւնոյն ծնողների յետագայ զաւակները, որոնց յղութիւնը կատարւել է ամուսինների չափահաս հասակում, լինում են աւելի առողջ, աւելի գւարժ և աւելի ընդունակ գոյութեան կուի համար։

Ունդարացի գիտնական Կէրոշի վիճակագրութիւնից երևում է, որ 20 տարեկանից պակաս հասակ ունեցող մայրերի զաւակները տալիս են 22, 10/0 մահ, մինչդեռ 20-ից մինչև 30 տարեկաններինը տալիս են միմիայն 12,850/0։ Բացի սրանից, առաջինների զաւակները թոքախտից մեռնում են երկու անգամ աւելի, իսկ կազմւածքի ընդհանուր թուլութիւնից երեք անգամ աւելի, քան թէ չափահաս մայրերի զաւակները։

Այդ բանը աւելի պարզ նկատելի է կենդանիների և բոյսերի մէջ։ Անասնապահութեամբ պարապողներին լաւ յայտնի է, որ անչափահաս անասունների ձագերը լինում են աւելի թոյլ և աւելի վտիտ. այդ պատճառով փորձառու գիւղատնեսները



կովերի, ոչխարների, ձիերի և ուրիշ ընտանի կենացանիների անդրանիկ ձագերին երբէք չեն գործածում իրենց անսասունների թիւը բազմացնելու համար. այդ անդրանիկները լաւ սերունդ առաջացնելու համար անհամապատասխան են գիւղատնտեսութեան պահանջներին: Յայտնի է նոյնպէս, որ մատղաշ հաւերի ճուն համարեա երկու անգամ աւելի փոքր է լինում, քան թէ չափահաս հաւելիք: Նոյնն է նաև բուսական թագաւորութեան մէջ: Այն բոյսերը, որոնք հէնց առաջին ամառը ծաղկում և պտուղ են բերում, սովորաբար նոյն տարին էլ չորանում են. ընդհակառակ այն ծառերը և թուփերը, որոնք սկսում են ծաղկել և պտղաբերել միայն մի որոշ հասակի հասնելուց յետոց, շատ աւելի երկար են ապրում: Առհասարակ շուտ պտղաբերող բոյսերը չեն աճում, չեն զարգանում և աւելի վաղ են թառամում ու չորանում:

9.

Ուշ կամ տարաժամ ամուսնութիւնը նոյնպէս վատ է ազդում թէ ամուսնացողների և թէ նրանցից առաջացած սերնդի վրայ: Ինչպէս որ ծեր կենդանիները և կամ հին ծառերը չեն կարող ուժեղ ձագեր և խոշոր պտուղներ տալ, այնպէս և ծեր ամուսինները անընդունակ են առողջ և զօրաւոր սերունդ առաջացնել: Այդ տեսակ ամուսնութիւնները մեծ մասամբ կամ բոլորովին անզա-

ւակ են մնում և կամ նրանցից ծնուռմ են թոյլ, վտիս և հիւանդու զաւակներ: Այս է պատճառը, որ միւնոյն ծնողներից առաջին զաւակները, որոնք ծնւած են նրանց Փիզիկական զարգացման կատարեալ շրջանում, սովորաբար աւելի առողջ և աւելի գւարթ են լինում քան թէ ծնողների ծերութեան հասակում ծնւածները: Ուշ հասակում ծնւած երեխանները ենթակայ են լինում անգլիական հիւանդութեան (ոսկորների ծռութիւն), գեղձախտի (ՅՈԼՈՒՅХԱ), թռքախտի և շատ դանդաղ են զարգանում թէ Փիզիկապէս և թէ մտաւորապէս: Ծեր ծնողների զաւակները, ասում է բժիշկ Լէւին, գուրկ են լինում իրենց հասակի թարմութիւնից և կայտառութիւնից և շատ յաճախ մեռնում են թռքախտից, թէև նրանց ծնողները ենթակայ չեն այդ հիւանդութեան: Եւ եթէ այդ սեսակ զաւակները կենդանի են մնում, այսու ամենայնիւ, նրանց Փիզիկական զարգացումը շատ դանդաղ է լինում և նրանք ենթարկում են զանազան հիւանդութիւնների:

Բացի սրանից ամուսնական կեանքը շատ վասէ ներգործում տարաժամ ամուսնացողների առողջութեան վրայ: Հասակն անցիացրած տղամարդը առանց այն էլ ենթակայ է լինում զանազան Փիզիկական իւանգարմունքների, որոնք մասամբ հետեւանք են նախկին ամուրի կեանքի, մասամբ էլ նոյն իսկ ծերութեան հասակի: Հասակն անցկացրած աղջկաց

կազմաձքը ենթարկւած է ֆիզիկական այնպիսի փոփոխութիւնների, որ նրանք կամ բոլորովին անընդունակ են լինում ծննդաբերութեան կամ ծննդաբերութիւնը այնքան ծանր և գժւար է լինում, որ շատ անգամ նրանք զոհ են գառնում այդ բնական գործողութեան։ Պրոֆէսոր Գորլիցի հաւաքած տեղեկութիւններից երեսում է, որ ծննդաբերութիւնից մեռնող կանանց 35 տոկոսը միայն մեռնում է երիտասարդ հասակում, իսկ մնացած 65 տոկոսը վերաբերում է այն կանանց, որոնք առաջին անգամ ծննդաբերում են հասակն անցկացնելուց ետոց։ Բացի սրանից, այդ տեսակ կանաչք արդէն թառամած և երիտասարդական հիւթերը կորցրած լինելով՝ չեն կարող բաւականաչափ և թարմ կաթ արտադրել իրենց զաւակներին կերակրելու համար։

Այդպէս ուրեմն, ինչպէս վաղաժամ՝ այնպէս և տարաժամ ամուսնութիւնները միանդամայն անհամապատասխան են առողջապահութեան պահանջներին, որոնց նպատակն է նպաստել թէ ամուսնուների և թէ նրանցից առաջացած սերնդի ֆիզիկական և հոգեկան բարգաւաճութեան։

Բացի այդ ամենից, առողջապահութիւնը պահանջում է, որ լինի համաշափութիւն ամուսնացողների հասակի մէջ։ Յայտնի է, որ աղջկայ մարմնական զարգացումը աւելի շուտ է կատարւում, քան թէ տղացինը։ Այդ պատճառով էլ համարեա բոլոր աղջերի մէջ ընդունւած է, որ փեսան մի քանի

տարով մեծ լինի հարմացուից։ Հասարակ ժողովրդի մէջ այդ տարբերութիւնը սովորաբար լինում է 2—3 տարի, իսկ կրթւած դասակարգի մէջ 5—10 տարի։ Ֆիզիոլոգիական ֆակտերը ցոյց են տալիս, որ այդ բնական տարբերութիւնը օգուտ է թէ ամուսինների և թէ նրանց զաւակների առողջութեան համար։ Բայց բոլորովին հակառակ աղջեցութիւն է ստացւում, երբ հասակների տարբերութիւնը այդ չափից վեր է։ Դժբաղջաբար ոչ եկեղեցին և ոչ պետական օրէնտրութիւնը չեն սահմանել ոչ մի կանոն ամուսինների հասակի համաշափութեան մասին։ Եւ այդ է պատճառը, որ այդ կէտը ամենից աւելի դէպի չարն է գործադրւում։ Ճշմարիտ է ժողովրդական աւանդութիւնը միշտ ծաղրով և նախատինքով է վերաբերում դէպի անհամաչափ ամուսնութիւնները, բայց, չնացելով սրան, սակաւաթիւ չեն օրինակները, երբ 50—60 տարեկան տղամարդիկ պսակում են 18—20 և մինչև անգամ աւելի ևս մատաղ հասակի աղջկերանց հետ։ Պատահում են և հակառակ դէպէր, երբ հասակն անցկացրած կանաչք գնում են իրենցից տարիքով փոքր երիտասարդների, բայց այդ տեսակ դէպէր համեմատաբար աւելի սակաւաթիւ են։

Անհամաչափ ամուսնութիւնը նոյնչափ շատ վատ է աղջում թէ ամուսինների և թէ նրանց զաւակների առողջութեան վրայ։ և այդ աղջեցութիւնը նոյնչափ աւելի սաստիկ է, որչափ մեծ է

հասակների տարբերութիւնը։ Մատաղահաս օրիորդը գնալով տարիքը անցկացրած տղամարդին, շատ շուտով կորցնում է իւր թարմութիւնը, զրկում է մայր լինելու բարձր բաւականութիւնից և ենթարկում է զանազան ջղային և ուրիշ հիւանդութիւնների։ Սորա պատճառը մասամբ այն է, որ այդպիսի դեպքերում կինը զգւանքով և տհաճութեամբ է անձնատուր լինում զառամած ամուսնու փաղաքշանքներին, որ միայն զրգում է նորան առանց բեղմնաւորելու և առանց բաւականութիւն տալու նորա բնական ցանկութիւններին, մասամբ էլ—ինչպէս Սանկտորիուսն է ասում—այն պատճառով՝ որ մատաղ կեանքը ենթարկում է թառամած կեանքի շնչառութեան։ Վնասուում է նոյնպէս և տղամարդի առողջութիւնը, որովհետեւ նա հարկադրւած լինելով բաւականութիւն տալ իւր մատաղ ամուսնի ցանկութեան, ստիպւած է լարել իւր ոյժերը կամ դիմել այնպիսի միջոցների, որոնք արհեստական կերպով բարձրացնում են նորա առնական կարողութիւնը։ Ոյժերի այդ անսովոր լարումը և այդ արհեստական միջոցները, ի հարկէ, չեն կարող առանց հետեւանքի մնալ առանց այն էլ մաշւած կազմածքի համար։

Այդ տեսակ ամուսնութիւնները մեծ մասամբ կամ անզաւակ են մնում կամ նրանցից ծնւած զաւակները լինում են թոյլ, հիւանդու և սովորաբար մեռնում են մանկական հասակում։ «Մատաղահաս

օրիորդը մարդու գնալով զառամած ծերունուն—ասում է բժիշկ Նէւին—վիրաւորում է բնութեան սրբազն օրէնքը, որովհետեւ նա մի ամբողջ սերնդի շահերը զո՞ն է բերում մի հատ վաւաշոտ անձնաւորութեան քմահածոյզքին։ Այդ տեսակ ամուսնութիւնը մի կատարեալ ֆիզիոլոգիական սկանդալ է։ Մենք չենք յիշում անհամաչափ ամուսնութեան բարոյական հետեւանքների մասին։ Եթէ ընտանեկան յարկի սրբութիւնը և ամուսնական հաւատարմութիւնը կազմում են ամուսինների երջանկութեան գլխաւոր պայմաններից մէկը, այն ժամանակ ոչ մի բան այնքան չէ սպառնում այդ երջանկութեան, որչափ անհամաչափ ամուսնութիւնը։ Այդ շատ հասկանալի է...

Այն ամենից, ինչ որ ասացինք ամուսնական հասակի վերաբերութեամբ, հետեւում է, որ թէ ամուսնացողների և թէ նրանց զաւակների առողջութիւնը և բարօրութիւնը պահանջում են, որ ամուսնութիւնը տեղի ունենայ միմիայն այն հաստկում, երբ ամուսնացողները գտնւում են իրենց մարմնական և հոգեկան զարգացման կատարեալ շըրջանում։ Գիտութիւնը ցոյց է տալիս, որ այդ շրջանը աղջկայ համար սկսւում է 18—21 տարեկան հասակում, իսկ տղայի համար՝ 20—25 տարեկան հասակում։ Այդ տարիների մէջն է, որ թէ աղջկայ և թէ տղայի կազմւածքը հասնում է զարգացման վերջին կէտին, որից յետոյ նրանք այլ ևս

դադարում են մեծանալուց։ Զարգացման այդ կատարեալ շրջանը տևում է աղջկայ համար մինչև 35՝ իսկ տղայի համար մինչև 45 տարեկան հասակը։ Այդ պատճառով, ով ցանկանում է ամուսնանալ ոչ թէ իւր կրքերին բաւականութիւն տալու համար կամ շահասիրական ու կարիերիստական նպատակներով, այլ առողջ սերունդ ունենալու համար, պէսք է ամուսնայ այդ որոշած սահմանի մէջոչ առաջ և ոչ յետոյ։

Այդ որոշած սահմանը համապատասխանում է ոչ միայն առողջասականութեան այլ և ժամանակակից կուլտուրական կեանքի պահանջներին։ Կար ժամանակ—և այդ ժամանակը դեռ այժմ էլ բոլորովին անցած չէ—երբ ամուսնութիւնները կատարում էին անզիտակցաբար, շատ անգամ մինչև իսկ ամուսնացողների ցանկութեան հակառակ, միմիայն նրանց ծնողների կամքով և հաճութեամբ։ Բայց այժմ կեանքը պահանջում է, որ ամուսնութիւնը հիմնած լինի ամուսինների գիտակցական ընտրողութեան վրայ։ Այդպիսի ընտրողութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ ամուսնացողները ունին որոշ զարգացում, որոշ ինքնուրոյնութիւն և որոշ աշխարհայեցողութիւն։ Առանց այդ պայմանների ամուսնական երջանկութիւնը, գոնէ փոքրիշատէ քաղաքակրթւած հասարակութեան մէջ, չէ կարող հաստատւած լինել ամուր հիմունքների վրայ։ Իսկ այդ ամենի համար, ինչպէս արդէն

վերը յիշեցինք, թէ եկեղեցու և թէ պետութեան սահմանած ամուսնական հասակը միանգամայն անբաւարար է<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Մեր մէջ փոքրահասակ աղջկերանց մարդու տալու սովորութիւնը, բացի կլիմայական և տնտեսական-պատճառներից, ունի նաև իւր պատմական պատճառը։ Յատնի է, որ պարսիկների և տաճիկների տիրապետութեան ժամանակ, մանկահասակ և մանաւանդ սիրուն աղջիկ ունենալը մի կատարեալ պատուհաս էր ծնողների համար, Այդ տեսակ աղջկերքը սովորաբար զոհ էին գառնում չափտակութեան, գերի էին տարում հեռու աշխարհներ կամ զարդարում էին տեղական խաների և փաշաների հարէմներ։ Այդ պատճառով ծնողները աշխատում էին, ինչքան կարելի է, շուտով մարդու տալ իրենց աղջկերանց և աշդպիսով ազատել նրանց սպառնացող վտանգից։ Պատմում են, որ դեռ ևս անցած դարու վերջներին, Երեանի խանը կամենալով իւր որդու համար հարեմ պատրաստել հրամակէլ էր հաւաքի Արարատեան նահանգում գտնուող բոլոր կուս աղջկերանց, որպէս զի նրանց միջից ընտրի ամենասիրուններին։ Ղուկաս կաթուղիկոսը, տեղեկանալով խանի այդ մտադրութեան մասին, հրաման արձակեց, որ բոլոր աղջկերանց՝ սկսած ութ տարեկան հասակից խսկոն պատկեն։ Պատկողների թիւը այնքան մեծ էր, որ, եկեղեցիներում տեղ չկանելով, թոնիրների վրա էին կատարում պատակի խորհուրդը։ Երբ խանի մարդիկը հասան գիւղերը, ոչ մի տեղ այլ ես ութ տարեկանից վեր աղջիկ չկարողացան գտնել։

Ահա այդ տեսակ պայմանների աղջեցութեան տակ են մշակւել եկեղեցական օրէնադրութիւններից շատերը.

Անցնենք այժմ ամուսնական առողջապահութեան միւս պայմաններին:

Դ.

Ահագին նշանակութիւն ունի թէ ամուսինների և թէ մանաւանդ սերնդի առողջութեան համար արինակութեան կամ մերծատոր ազգակցութեան ինդիրը: Գիտութիւնը, հիմնւելով բազմաթիւ փաստերի վրայ, որոնց մասին կը խօսենք փոքր ինչ ներքեւում, ապացուցանում է, որ արիւնակցական ամուսնութիւնը վնասակար ազդեցութիւն ունի նախ ամուսինների և մանաւանդ կնոջ վրայ, որը շատ անգամ, այդ հանգամանքի շնորհիւ, կորցնում է որդենութեան ընդունակութիւնը, կամ նորա կազմաձքը ենթարկւում է այնպիսի խանգարմունքների, որ յղութիւնը չէ կարողանում հասնել իւր որոշեալ սահմանին և ընդհատում է զաւակավիժութեամբ: Բացի սրանից այդ տեսակ ամուսնութիւնը մեծ մասամբ կամ մնում է բոլորովին անգաւակ կամ առաջացնում է այնպիսի թոյլ և ախտաւոր սերունդ, որն անկարող լինելով պահպանել ցեղի շարունակութիւնը, նպաստում է ընտանիքի սպառման:

որոնք այժմ ինքն ըստ ինքեան կորցնում են իրենց նշանակութիւնը, քանի որ այդ պայմանները ավես գոլութիւն չունին, վաղուց արդէն անցած լինելով պատմական աւանդութիւնների շարքը.

Ամուսնութիւնը մերձաւոր ազգակցութեան աստիճանում նւազեցնում է որդենութեան ընդունակութիւնը և նպաստում է սերլնդի թուլանալուն—ասում հռչակաւոր Դարւինը:

Այդ երեսոյթը բացատրում է հետեւեալ կերպով: Յայտնի է, որ աշխարհի երեսին չկայ ոչ մի մարդ, որը թէ ֆիզիկապէս և թէ հոգեպէս կազմակերպւած լինէր իդէալական կատարելագործութեամբ: Ամեն մարդ ունի որ և իցէ պակասութիւն, կամ ինչպէս սովորաբար ասում են, ամեն մարդ ունի իւր թոյլ կողմը. և եթէ այդ պակասութիւնը աչքի չէ ընկնում, սորա պատճառն այն է, որ նա դուրս չէ գալիս մի որոշ սահմանից: Միւնոյն ընտանիքի անդամները սովորաբար ենթակայ են լինում միւնոյն տեսակի պակասութեան, որ նրանք ժառանգաբար փոխանցում են նաև իրենց զաւակներին: Յայտնի է նմանապէս, որ ծնողների ամեն մի յատկութիւնը փոխանցելով սերնդին, այդ յատկութիւնը սերնդի մէջ աւելի ևս զարգանում, աւելի արմատանում և աւելի ուժեղանում է: Ժառանգական այդ մեծ օրէնքի վրայ է հիմնւած Դարւինի նշանաւոր թէորիան—էովիւցիայի թէորիան—որ բացատրում է թէ ինչպէս նախնական թոյլ և պարզ կենդանական տեսակներից, շորհիւ ժառանգական յատկութիւնների աստիճանաբար զարգանալուն, առաջ են եկել ժամանակակից բարդ և կատարելագործւած կենդանական տեսակները:

Այժմէ եթէ ենթաղրենք, որ միւնոյն ընտանիքի անդամները, հետևաբար միւնոյն պակասութիւնն ունեցող անձնաւորութիւնները, ամուսնանում են իրար հետ, կը նշանակի նրանք այդ պակասութիւնը փոխանցում են իրենց զաւակներին կրկնակի չափով՝ թէ հօրև թէ մօր կողմից։ Այդ չափը աւելի ևս սաստկանում է, եթէ ազգակցական ամուսնութիւնը կրկնւում է շարունակաբար մի քանի սերունդ։ Այդ դէպքում այն ընտանեկան յատկութիւնը, որ առաջ համարում էր միայն մի աննկատելի պակասութիւն, այժմ արդէն դառնում է խոշոր պակասութիւն, դառնում է ախտ, իսկ ախտաւոր սերունդն անընդունակ է պահպանել ընտանիքի անընդհատ գոյութիւնը։

Ընդհակառակին, երբ ամուսնութիւնը տեղի է ունենում զանազան ընտանիքների անդամների մէջ, այն ժամանակ աւելի հաւանական է, որ մէկի պակասութիւնը ծածկում է միւսի առաւելութեամբ։ Հետևաբար նրանցից ծնւած զաւակները լինում են աւելի հաւասարակշռած, աւելի կատարելագործւած։

Մեր միտքը աւելի պարզելու համար առաջ բերենք մի աւելի պարզ օրինակ։

Ենթաղրենք, որ մի ընտանիքի մէջ կարճատեսութիւնը տիրապետող յատկութիւն է, իսկ լսողութիւնը զարգացած է կատարեալ կերպով։ Մի ուրիշ ընտանիքում, ընդհակառակին, լաւ զարգացած է տեսողութիւնը, իսկ լսողութեան ընդունակութիւնը

նւազ է։ Փորձը ցոյց է տալիս, որ եթէ առաջին ընտանիքի անդամները ամուսնում են իրար հետ՝ նրանցից ծնւած զաւակները լինում են չափազանց կարճատես, համարեալ կոյցի Երկրորդ ընտանիքի ազգակցական ամուսնութիւնից առաջանում են շատ ծանր լսողութիւն ունեցող, համարեալ խուլ զաւակներ։ Բայց եթէ ամուսնութիւնը տեղի է ունենում առաջին և երկրորդ ընտանիքների անդամների մէջ, այն ժամանակ զաւակների թէ տեսողութիւնը և թէ լսողութիւնը լինում է բոլորովին կանոնաւոր։ Այդ նշանակում է, որ զանազան ընտանիքների զանազան պակասութիւնները ծածկում են մէկմէկու փոխադարձ առաւելու թիւններով։

Մենք կամաւ փոքր ինչ աւելի ենք կանդ առնում այդ խնդրի վրայ, որովհետեւ, մեր կարծիքով, նրա վրայ պէտք է հիմնած լինի հասի և չհասի հարցը, որ, ինչպէս յայտնի է, վաղուց արդէն գայթակղութեան քար է դարձել մեր եկեղեցու սպասաւորների համար։ Եկեղեցական օրէնսդրութեան հիմնադիրները, զեկավարւելով դարաւոր փորձերի վրայ հիմնած բնազդումով, հարկաւոր են համարել սահմանափակել ամուսնութիւնը ազգակցական որոշ աստիճաններում։ Բայց որովհետեւ թէ այդ օրէնսդիրները և թէ մանաւանդ նրանց յաջորդները անտեղեակ են եղել սահմանած օրէնքի բանական հիմունքներին, այդ պատճառով էլ օրէնքը դարձել է անձնական հասկացողութեան և կամայականութեան

առարկայք Մեր մէջ, ինչպէս այդ երևում է գեր-  
Արիստակէս սրբազանի «Ամուսնական խնդիրներ» վեր-  
նագրով յայտնի հետազօտութիւնից, ամուսնական  
արիւնակցութեան ասոինձանը համարեա այնքան ան-  
գամ ենթարկել է փոփոխութեան, որքան եկեղե-  
ցական ժողովներ են տեղի ունեցել: Եւ չնայելով  
սրան, մինչև այսօր էլ այդ խնդիրը մնում է քաօսա-  
կան խառնաշփոթութեան մէջ. այն՝ ինչ որ հաս է  
մէկի համար չհաս է միւսի համար. այն՝ ինչ որ  
հաս է մի կաթուղիկոսի օրով, չհաս է միւսի օրով:  
Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այդ  
խնդիրը լուծելու համար շատ անգամ առաջնորդ-  
ում էին այնպիսի միամիտ պատճառաբանութիւն-  
ներով, որպիսին գտնում ենք Գրիգոր Տաթեացու  
«Հարցմանց» գրքի մէջ: Մեր եկեղեցու այդ քաջ և  
համակրելի ախոյեանը, այն հարցին, թէ «վասն էր  
ի հին օրէնս երաւ լիւր ազգէն առնուլ հարսն, և  
ի նորս՝ յօտար ազգէ», հետեւեալ միամիտ պատաս-  
խանն է տալիս—«... ի նորս՝ յօտար ազգս առնել  
խնամութիւն, զի սէրն սփռեսցի և տարածեսցի  
ի բազում ազգս: Միւնոյն բացատրութիւնն է տա-  
լիս Գրիգոր Տաթեացուց շատ առաջ ընդհանուր  
քրիստոնէական եկեղեցու նշանաւոր հայրերից ու  
Օգոստինոսն, ասելով, որ «առ անդագոյնս յօդակա-  
պելոց զընկերական կեանս՝ բազում ընտանութիւնք  
ի բազում մարդիկ տեղի ունիցինս: Պարզ է, որ այդ

տեսակ հիմունքների վրայ հաստատւած օրէնքը չէ  
կարող խախուտ չլինել:

Դառնանք այժմ Փակտերին. տեսնենք ինչ են  
ասում Փակտերը արիւնակցական ամուսնութիւն-  
ների մասին: Սրիւնախառնութեան վնասակար ազ-  
դեցութիւնն աւելի պարզ կերպով նկատելի է կեն-  
դանիների և բոյսերի մէջ: Կենդանաբանների և  
բուսաբանների բազմաթիւ հետազօտութիւնները  
ցոյց են տալիս, որ արիւնակից կենդանիների յա-  
ճախակի խառնուրդը վերջանում է այդ խառնուր-  
դից առաջացած սերնդի ընդհանուր թուլութեամբ  
և սերնատութեամբ: Այդպէս, օրինակ, յայտնի է, որ  
մետաքսի որդը երկրորդ սերնդում արդէն այնքան  
թուլանում է, որ հազիւ կարողանում է կոկոն  
պատրաստել, իսկ երրորդ սերնդում անընդունակ է  
դառնում նոր սերունդ առաջացնելու. բայց եթէ  
երկրորդ սերնդի համար բերում են ուրիշ տեղից  
նոր սերմեր, այն ժամանակ այդ սերունդը նոր սեր-  
մերից կարողանում է առաջացնել բոլորովին առողջ  
և զօրաւոր որդեր: Զկնորսներին յայտնի է, որ եթէ  
ձուկը երկար ժամանակ ապրում և բազմանում է  
միւնոյն աւագանում, նորա սերունդը սկսում է կա-  
մաց-կամաց նւազել և ոչնչանալ: Բայց երբ մի ու-  
րիշ աւագանից բերում են նոր ձկներ և խառնում  
են առաջւայ աւագանի ձկների հետ, այդ խառնուր-  
դից ստացեւում է արդէն խոշոր և բազմաթիւ սե-  
րունդ: Անասնապահներին և ձիաբոյծներին վաղուց

արդէն շատ լաւ յայտնի է, որ անասունների և ձիերի ազնիւ տեսակները թուլանում և փչանում են, եթէ երկար ժամանակ մնում են առանց խառնուրդի օտար նախիրի կամ օտար երամակի որձերի հետ։ Դարւինը ցիշում է անգլիական նշանաւոր ձիաբոյծների մասին, որոնք չափազանց բարձր գնահատելով իրենց ձիերի «ազնիւ արիւնը»։ Հրաժարում էին օտար երամակի արիւն խառնել իրենց երամակներին։ Բայց վերջ ի վերջոյն նրանք ստիպւած էին փոխել իրենց սիստեմը, որովհետեւ մի քանի սերնդից յետոյ նրանց ազնիւ ձիերը այն աստիճանի փշացան և քչացան, որ սպառնում էին սնան կացնել իրենց տէրերին։ Միստէր Բէտոնի երամակը համարում էր աշխարհի ամենալաւ երամակը։ Տասն և երեք տարի շարունակ նա բաղմացնում էր այդ երամակը ամենամերձաւոր արիւնակիցների խառնուրդով։ Այդ սիստեմի հետևանքն այն եղաւ, որ քիչ էր մնում երամակը բոլորովին ոչնչանար։ Այդ պատճառով, հետևեալ տասնեեօթ տարւայ ընթացքում, նա սկսեց թարմացնել իւր երամակը օտար նժոյգների խառնուրդով, և այդպիսով միայն ազատեց իւր ֆիրմայի հոչակը։ Նկատւած է, որ երբ կենդանիների մէջ խառնուրդը կատարում է հօր և աղջկայ, մօր և որդու, եղեալըների և քոյրերի մէջ և մանաւանդ երբ այդ խառնուրդը կայացւում է մի քանի սերնդի ընթացքում, այդ տեսակ խառնուրդից կամ ոչինչ չէ առաջանում, կամ առաջա-

նում են թոյլ և մանր ձագեր, որոնք շատ անգամ ունինում են հրէշաւոր կազմւածք։ Յայտնի անասնական Ուրացտը փորձի համար խառնեց որձ խոզը իւր յետագայ սերունդների հետ մինչև եօթերորդ սերունդը։ հետևանքը ցոյց տւեց, որ այդ խառնուրդը կամ մնում էր առանց բեղմնաւորութեան, կամ առաջացնում էր չափազանց թոյլ ձագեր, որոնք երկար չէին կարողանում ապրել, կամ առաջանում էին այն աստիճանի թոյլ և ապուշ ձագեր, որ անընդունակ էին լինում մինչև անգամ կաթ ծծելու և ոտերի վրայ կանգնելու։

Բոյսերի վերաբերութեամբ Դարւինի, Հիլդէնթրանդտի, Դելպինօի, Աքսէլի, Կրամէրի և ուրիշ յայտնի բուսաբանների հետազոտութիւնները ապացուցանում են, որ թէև բոյսերից շատերը կարող են հրենք իրենց բեղմնաւորել, (որովհետև նրանց ամեն մի ծաղիկը կրում է իւր վրայ թէ արական և թէ իգական գործարաններ), բայց միմիայն այն ժամանակ են ստացւում առատ և խոշոր սերմեր, երբ մի ծաղիկ բեղմնաւորում է ուրիշ ծաղիկի, կամ մանաւանդ, երբ մի թփի ծաղիկները բեղմնաւորում են մի ուրիշ թփի ծաղիկներով։ Այդ տեսակ բեղմնաւորութիւնը կոչւում է փոխաղարծ քեղմնաւորութիւնն և կատարւում է մեղուների, բղէզների և ուրիշ միջատների կամ քամու հոսանքի միջոցով։ Միջատները, թռչելով մէկ ծաղկից միւսի վրայ, մէկի բեղմնաւորող փոշին տեղափոխում են

միւսի վրայ: Այդպիսով թէ կենդանական և թէ բուսական թագաւորութեան մէջ փոխադարձ բեղմընաւորութիւնից առաջանում են աւելի խոշոր, աւելի ուժեղ և աւելի զարգացած անհատներ: Եւ ընդհակառակն, ազգակցական բեղմնաւորութիւնը կամ մնում է բոլորովին ամուլ, կամ առաջացնում է մանր, թոյլ և ախտաւոր սերունդ:

Ե.

Այս երեսյթը նկատում է նաև մարդկային ցեղի վերաբերութեամբ: Բժիշկ Ֆրէնսիս Դէւին, որ բազմաթիւ հետազօտութիւններ ունի արիւնակցարագանքիւ ամուսնութեան հարցի մասին, պնդում է, որ կան ամուսնութեան հարցի մասին, պնդում է, որ այդ տեսակ ամուսնութիւնները կամ բոլորովին անայտ տեսակ ամուսնութիւնները կամ ծննդալնունակ են լինում որդեծնութեան կամ ծննդարերում են հիւանդու և ախտաւոր սերունդ: Նորա ասելով, արիւնակից ամուսինների զաւակները աչքի են ընկնում ջղային ցաւագարութեամբ, ապշութեամբ, համրութեամբ և խլութեամբ: Բնաւորութեամբ նրանք լինում են թոյլ, անտարբեր, զուրկ թեամբ նրանք լինում են թոյլ, անտարբեր, զուրկ թեամբ կամքից և անընդունակ որեւիցէ նախաձեռնութեան: Բժիշկ Բէմիսի հետազօտութիւնից, որ կատարւած է Միացեալ նահանգներում, երեւում է, որ այդ երկրի հիւանդանոցներում գտնած խուլ և համրերի 10 տոկոսը, իծնէ կոյրերի  $5^{\circ}/_0$ -ը, և ապուշների  $15^{\circ}/_0$ -ը կազմում են արիւնակից ամուսինների զաւակները: Բերգմանը Գերմանիայում

նկատել է, որ խուլ և համրերի ամենամեծ տոկոսը առաջանում է ազգակից ամուսնութիւններից: Բուգինի հետազօտութիւններից երեւում է որ, մինչդեռ արիւնակից ամուսնութիւնները ֆրանսիայում կազմում են 1000-ին միայն 2 տոկոս, այդ ամուսնութիւններից առաջացած խուլ և համրերի թիւը, ընդհակառակն, 15—20 անգամ՝ աւելի է, քան թէ միւս ամուսնութիւններից ծնւածները: Յայտնի գիտնական Լիբրէյսը իծնէ կուրութիւնը ամբողջապէս վերագրում է արիւնակցութեան ազգեցութեան և սրանով է բացատրում այն հանգամանքը, որ բուգիական Պրուսիայում, որտեղ ամուսնութիւնը թոյլատրում է մերձաւոր ազգականների մէջ, իծնէ կոյրերի թիւը անհամեմատ բարձր է, քան կաթոլիկ Աւստրիայում: Հրէանների մէջ ամուսնութիւնը թոյլատրում է արիւնակցութեան աւելի ևս մերձաւոր աստիճաններում: այդ պաճառով էլ, դոքանոր Ելիոտի վկայութեամբ, ոչ մի ազգի մէջ այնքան կոյրեր, կակազններ, ջղային ցաւագարներ, ապուշներ և ուրիշ ախտաւորներ չեն գտնուում, որչափ հրէանների մէջ: Լիբրէյսի հաշով, մինչդեռ քրիստոնեանների մէջ 1477 հոգուն ընկնում է միայն մի հատ խուլ և համր, հրէանների մէջ մէկ խուլ և համրը ընկնում է 368 հոգու: Այն ժողովուրդները, որոնք քաղաքական և աշխարհագրական պայմանների շնորհիւ կարւած են օտար հասարակութիւնից և ստիպւած են ամուսնական լնորութիւնը կատարել միմիայն

իրենց երկրի նեղ սահմանում, կատարելապէս զոհ են դառնում արիւնակցութեան վնասակար հետեւանքներին։ Այդ երեսցթը շատ լաւ ուսումնասիրւած է անգլիական լեռնական նահանգներում, որոնց բնակիչները շնորհիւ անդադար կրկնող արիւնակցական կապերի հետղհետէ դարձել են կատարեալ ապուշներ (իդիօտ) և թուլամիտներ (կրետին)։ Այդ միենոյն ազդեցութեան շնորհիւ, Ամերիկայի ստրուկ նեգրների մէջ մի ժամանակ խուլ և համրերի թիւը հասել էր անսովոր քանակութեան։ Վերին Սաւոյացում, որտեղ ազգակցական ամուսնութիւնները սովորական են, իբրև հետեանք այդ վնասակար սովորութեան, սաստիկ տարածւած են զղային տարօրինակ հիւանդութիւններ՝ դիւահարութիւն, լուսնոտութիւն, ընկնաւորութիւն և այլն և այլն։ Առհասարակ բոլոր այն դէպքերում, երբ մարդիկ այս կամ այն պատճառով առանձնանում են մէկ-մէկուց և ամուսնանում են մի քանի ընտանիքների նեղ շրջանում, այդ տեսակ ամուսնութիւնից առաջանում են թոյլ, հիւանդոտ և ախտաւոր զաւակներ, որոնք վերջիկերջոյ սպառում են ընտանիքի գոյութիւնը, կամ, ինչպէս ասում են, սերհատուլման (վարոյածածություն)։

Այդ բանի ամենալաւ ապացոյցը մենք տեսնում ենք հասարակութեան բարձր դասակարգի, այսպէս կոչւած ազնւական դասակարգի մէջ։ Այդ դասակարգը, իւր արիւնի կարծեցեալ «ազնւութիւնը»

պահպանելու համար, վաղուց արդէն սովորութիւն է գարձրել ամուսնական ընտրութիւնը կատարել ընտանիքների շատ սահմանափակ շրջանում։ Այդ պատճառով արիւնակցական ամուսնութիւնները ոչ մի դասակարգի մէջ այնպէս յաճախ չեն կրկնում ինչպէս ազնւական դասակարգի մէջ, և հէնց այդ պատճառով էլ ժողովրդի ոչ մի դասակարգ չէ արտադրում այնքան ապաւշներ, խելացնորներ, խեղանդամներ և ֆիզիկապէս ու բարոյապէս արատաւորւած անդամներ, որչափ արիւնի ազնւութեամբ պարծեցող այդ դասակարգը։ Գիտութեան տևակէտից այն արիւնը միայն կարող է ազնիւ համարւել, որ ընդունակ է առողջ, թարմ, բարոյապէս և ֆիզիկապէս հաւասարակշւած սերունդ արտադրելու։ Դոկտոր Եակոբիի ասելով, «վերին ասուիմանի ծիծաղելի են այն մարդիկ, որոնք պարծենում են ընտանիքների հնութեամբ։ Արիւնի հնութիւնը հեռու լինելով որևիցէ արժանաւորութիւն ունենալուց, միենոյն ժամանակ մի կատարեալ ֆիզիոգիական արատ է»։ Այս է պատճառը, որ ազնւական դասակարգը ամեն ժամանակ և ամեն երկրում ենթակայ է եղել սաստիկ սերհատութեան։ Հառոմեացիների մէջ արիստոկրատները այնպէս արագ սերհատում էին, որ այդ դասակարգը պահպանելու համար կայսրները ստիպւած էին միշտ նորանոր ազնւականութիւն ստեղծել։ Ֆրանսիայում, Գերմանիայում, Աւստրիայում և Սպանիայում, միջնադա-

րեան ասպետների ացդ հայրենիքներում, հին ազնւականների թիւը այժմ մատով կարելի է համարել: Անդ-լիական ազնւականութիւնը, որ մօտ էր սպառւելու, այն ժամանակ միայն սկսեց կենդանանալ և ուժեղանալ, երբ ւնդիմակից արխատոկրատները, հրաժարուելով արիւնակից ամուսնութեան սովորութիւնից, սովորութիւն գարձրին ամուսնական ընտրութիւնը կատարել օտար ազգերի մէջ: Նորհիւ այդ հանգամանքի, անդիմական արխատոկրատիան այսօր ամենից բարձր տեղն է բռնում բոլոր միւս աշխարհների ազնւականութեան շարքում: Սիսմոնդ-դը-Սիսմոնդին, խօսելով ազնւական դասակարգերի սերհատութեան մասին, ասում է, որ «Եթէ այդ դասակարգի գոյութիւնը երբեմն աւելի երկար է տեսում քան թէ կարելի էր սպասել, սորա պատճառն այն է, որ կողմնակի զաւակները մեծ քանակութեամբ թարմ արիւն են ներմուծում ազնւականների հասցած արեան մէջ»:

Այսպէս, ուրեմն, ֆակտերը ցոյց են տալիս, որ արիւնական ամուսնութիւնը վնասակար կերպով է ներգործում սերնդի պահպանութեան վրայ: Նախ այն պատճառով, որ նւազեցնում է որդենութեան ընդունակութիւնը, և երկրորդ՝ նպաստելով սերնդի թուլութեան, ախտաւորութեան և սերհատելուն: Այդ վնասակարութիւնն աւելի ևս խստանում է, երբ արիւնակացական կապերը տեղի են ունենում միւնո՞ն ընտանիքի մի քանի սերունդների մէջ յաջորդաբար:

Քայի սորանից, ինչքան աւելի մօտ է արիւնակցութեան աստիճանը, այնքան աւելի մեծ է և նորանից առաջացած վտանգը: Բուդէնի, Պիրուի, Բրոշարի և ուրիշ գիտականների հաւաքած տեղեկութիւններից երեւում է, որ արիւնակցութեան չորրորդ աստիճանում արատաւոր զաւակների թիւը կազմում է 67 տոկոս, երրորդ աստիճանում՝ 81 տոկոս: Իսկ աւելի ևս մօտիկ աստիճանում՝ 91 տոկոս: Մորէլի, Դարւինի և ուրիշների կարծիքով, արիւնակցութեան վնասակար ազգեցութիւնը չքանում է միայն չորրորդ սերնդից ցետոց, այսինքն արիւնակցութեան ութերորդ աստիճանում: Այդ պատճառով այդ աստիճանը առողջապահութեան տեսակէտից պէտք է ընդունել իբրև ստորին սահման:

Քրիստոնէական եկեղեցիներից հոռմէական եկեղեցին թոյլատում է ամուսնութիւնը արիւնակցութեան վեցերորդ աստիճանում, յունականը՝ հինգերորդ աստիճանում, բողոքական եկեղեցին՝ չորրորդ և մինչեւ անգամ երրորդ աստիճաններում: Մեր մէջ, ինչպէս վերը նկատեցինք, արիւնակցութեան աստիճանը թէպէտ վերջնականապէս հաստատած չէ, բայց յամենայն դէպս չէ թոյլատըրում հինգերորդ աստիճանից առաջ: Միթար Գօշը, հիմնելով Դի ինի և Պարտաւի ժողովների որոշումների վրայ, համարաւոր է համարում ամուսնութիւնը հինգերորդ աստիճանում: Իսկ Սոի երկրորդ ժողովը (1243 թ-ին), որի որոշումը մեր ժողովա-

կան որոշումներից ամենավերջիննէ, սահանջում է, որ ամուսնացողները վեց ծննդով բաժանւած լինեն իրարուց. «զպակին ընտրութեամբ արացին, վեց ծննդովք բաժանեալ յազգակցութիւնէ արեանս: Ներսէս Շնորհալին, քահանաներին ուղղած ընդհանրական թղթի մէջ, պատւիրում է թոյլատրել ամուսնութիւնը միացն այն դէպքում, երբ ամուսնացողները բաժանւած են չորս սերնդով (կամ, որ նոյն է, ուժ աստիճանով): Եմի ոք ի համագրեաց, ասում է նա, որոց արեան մերձաւորութիւնն իցէ, պսակ օրհնութեան դիցէ, այլ մինչև ի յերկուց կողմանցն զչորրորդ ազգին գլխաւորութիւնն կատարեալ ունիցինս: Եւ որ զարմանալին է, Շնորհալի հայրապետն իւր այդ պատւէրը հիմնում է բնագիտական սկզբունքների վրայ: «Քանզի բնութիւն մարմնոյ ի չորից տարերաց գոլով—ասում է նա—յիրաւի և մարմնական ազգակցութիւնն մինչև ի չորրորդ թիւն ժամանէ, որ է այսպէս. ի միոյ հօրէ երկուց եղբարց բաժանեալ՝ հաւասար ունին յինքեանս զհօրն գոյացութիւն. իսկ առ ի նոցանէ ծնունդքն զիէս արեան եղբայրութեանն. և երրորդ ծնունդքն՝ որ եղբարցն որդւոց, զիէսոյն կէս արեանն միացն, իսկ չորրորդ ծնունդն՝ որ ի սոցանէ—զչորեակ մասն արեանն մնացելոց: Եւ այս է սահման և կէտ արեան մերձաւորութեանս: Շնորհալու որոշած ազգակցական աստիճանը, չնայելով իւր խստութեան, ամենից աւելի է համապատասխանում առողջապահութեան պա-

հանջներին և այն պայմաններին, որ սահմանում են հեղինակաւոր գիտնականները—Մորէլը, Դարւինը և ուրիշները:

Մնում է մեզ մի երկու խօսք ևս ասել այն չհասութիւնների մասին, որոնք հիմնում են խնամեութեան և հոգևոր ազգակցութեան հասկացողութիւնների վրայ: Մեր եկեղեցական օրէնքներով այդ կարգի ազգակցութիւնները համարեա նոյն չափ խիստ են պահպանում, որչափ և արիւնակցական ազգակցութեան աստիճանները: Սակացն զիտութեան տեսակեաից, այդ աեսակ ազգակցութիւնները ոչ մի հիմք չունեն արգելք հանդիսանալու ամուսնական կապերին: Այդ պատճառով, խնամեութեան և հոգևոր ազգակցութեան (սահմանագրութիւն, հոգեհայրութիւն և այլն) բոլոր աստիճաններում կատարւած ամուսնութիւնները ոչ միացն օրինաւոր, այլ երբեմն, մինչև անգամ, գերադասելի են: Այդպէս օրինակ, այրի մարդու համար աւելի գերադասելի է պսակւել իւր քենու հետ, որ անշուշտ աւելի գութ և խնամք կարող է ունենալ իւր քրոջ որբերի վրայ, քան թէ օտար կինը: Առողջապահութեան տեսակէտից նոյնպէս ոչ մի արգելք չէ կարող լինել, երբ երկու եղբայրներ պսաւում են երկու քոյրերի վրայ, կամ երբ մէկը ամուսնանում է իւր խորթ մօրնախին ամուսնուց ծնած աղջկաց վրայ, ևայլն, և այլն: Մի խօսքով, այն բոլոր դէպքերում, երբ ամուսնացողների մէջ չկայ անմիջական արիւնակցու-

թիւն, ամուսնութիւնը միանգամայն օրինաւոր է, եթէ միայն ամուսնացողների հասակը և առողջութիւնը համապատասխանում են առողջապահութեան պահանջներին:

Մենք կրկնում ենք. բնութեան առաջ օրինաւոր են միայն այն ամուսնութիւնները, որոնք ընդունակ են ծննդաբերելու և առողջութեան առաջարկութեան առաջացնելու: Ամեն մի պայման, որ չէ հակասում այդ նպատակին, օրինաւոր է և չէ կարող արգելք համարել ամուսնութեան: Ընդհակառակն, ամեն մի ամուսնութիւն, որ անընդունակ է որդենութեան, կամ որ կարող է առաջացնել միայն թոյլ և ախտաւոր սերունդ, ապօրինի է բնութեան համար, թէկուզ այդ ամուսնութիւնը կատարւած լինի եկեղեցու և պետական օրէնսդրութեան սահմանած բոլոր կանոնների համաձայն:

Զ.

Ամուսնական առողջապահութեան պայմաններից մէկը, կարելի է ասել ամենագլխաւորը, համարում է ամուսնացողների առողջութեան վիճակը: Մենք վերեւում արդէն ցիշեցինք, որ ոչ մի բան այնպէս չէ խախտում ընտանեկան և ամուսնական երջանկութիւնը, ինչպէս ամուսինների հիւանդոտութիւնը: Ի՞նչ սէր և ի՞նչ բախտաւորութիւն կարող է սպասել այն ամուսինը, որին ամուսնութեան վայելութիւնների փոխանակ վիճակում է

կատարել հիւանդապահի դառն պաշտօնը: Այդ վիճակը աւելի և ծոնրանում և դառնանում է, եթէ ամուսնի հիւանդութեան պատճառով քայլայտում է նաև ընտանիքի նիւթական, տնտեսական դրութիւնը: Բայց և հարուստ ընտանիքներում, նիւթական ամենափայլուն պայմանների մէջ ևս, ոչ մի բան չէ կարող փոխարինել առողջութեան տաւծերջանկութեանը: Մենք չենք խօսում պատահական հիւանդութիւնների մասին, որոնց ենթակայ է ամեն մի անհատ, այլ հիւանդութեան, կազմւածքի ախտաւորութեան մասին, որոնց առաջ անզօր են թէ հարստութիւնը, թէ փառքը և թէ նոյն իսկ գիտութիւնը:

Ամուսինների հիւանդութիւնը երկու վնասակար կողմ ունի: Առաջինը այն է, որ հիւանդութիւնը կարող է փոխադրւել ու վարակել նաև առողջ ամուսնին: Քանի քանի առողջ և կայտառ օրիորդներ, որոնք օժտւած են երջանիկ լինելու բոլոր յատկութիւններով, անմեղ կերպով զոհ են դառնում իրենց ամուսինների հիւանդութիւններին: Եւ միթէ զարմանալի չէ որ, այն ժամանակ, եթէ հասարակութիւնը և օրէնքը դրտապարտում ու պատժում են նրանց, որոնք համարձակում են ձեռք բարձրացնել ու վիրաւորել մի ուրիշին, միևնոյն ժամանակ այդ միևնոյն հասարակութիւնը և օրէնքը ազատ կերպով թոյլատրում են ամուսնին վարակել իւր ամենամերձաւոր էակներին — իւր կողակցին և իւր զաւակներին:

Հասարակութեան համար աւելի նշանաւոր է այն վտանգը, որը ամուսինների հիւանդութեան պատճառով սպառնում է նրանց բոլոր ապագայ սերնդին։ Այդ կողմից առանձին ուշադրութեան արժանի են այն հիւանդութիւնները, որոնք, ինչպէս արդէն գիտութիւնը ապացուցել է, ընդունակ են ժառանգաբար փոխանցւելու սերնդին։ Այդ կարգի հիւանդութիւններից մենք փոքր ինչ կանդ կ'առնենք միայն նրանց վրայ, որոնք աւելի տարածւած են. այդ հիւանդութիւններն են ծլերը, (տուբերկուլեօզ, վախոտկա), սիֆիլիսը, գինեմոլութիւնը (ալկօհոլիզմ) և հոգեկան ու ջղային հիւանդութիւնները։

Ծլերը<sup>1)</sup> ամենատարածւած հիւանդութիւններից մէկն է. աշխարհի եքեսին չկայ համարեամբ երկիր, որտեղ այդ հիւանդութիւնը մոռաք գործած չլինի։ Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ երկրագնդի վրայ բոլոր մեռնողների 1/7 մասը մեռ-

<sup>1)</sup> Թոքախտ բառի փոխանակ մենք գործ ենք ածում մլերք բառը, նախ նորա համար որ այդ բառը աւելի գործածական է ժողովրդի մէջ, և երկրորդ այն պատճառով, որ այդ հիւանդութիւնը միայն թոքերի հիւանդութիւն չէ, ինչպէս որ կարելի է կարծել թոքախտ բառից, այլ ամբողջ մարմնի։ Այդ հիւանդութեանը ենթարկում են մարմնի բոլոր մասերը—ուղեղը, մկանունքները, ոսկորները, և այդ վերջինները մինչև անդամ աւելի լաճախ քան թէ թոքերը։ Թոքախտը ճերքի միաւն մասնաւորութիւնն է։

նում է ճերքից։ բացի սրանից, գիտութիւնը և առօրեայ փորձը ապացուցանում են, որ ճերքը վերին աստիճանի հակամէտ է ճառանգաբար փոխանցւելու սերնդին ոչ միայն ծնողների, այլ և մերձաւոր արիւնակից ազգականների կողմից—հօրեղբօր, մօրեղբօր, հօրաքրոջ, մօրաքրոջ և ուրիշ արիւնակիցների կողմից։ Ակիհամսի հաւաքած վիճակագրութիւնից երևում է, որ 484 ճերքաւորներից 10 հոգի այդ հիւանդութիւնը ժառանգել էին իրենց պապից, 43 հոգի հօր կողմից, 67 հոգի մօրից, 10 հոգի հօրից և մօրից միաժամանակ, 72 հոգի հօր կամ մօր մերձաւոր ազգականներից, 224 հոգի իրենց հարազատ եղբայրներից և քոյրերից, իսկ 10 հոգի հօրեղբօր և մօրեղբօր որդիներից։ Ապացուցւած է, որ այդ հիւանդութեան ենթարկւածների 35—40% պատկանում է ժառանգական ճերքաւորներին։ Իսկապէս զաւակներին փոխանցւում է ոչ թէ ինքը հիւանդութիւնը, այլ հիւանդութեան տրամադրութիւնը։ Յայտնի է, որ ճերքը առաջանում է մի տեսակ բակտերիաններից, որոնց գոյութիւնը առաջին անգամ գտաւ պրոֆ. Կոխը, որի անունով և այդ բակտերիանները անւանւում են Կոխի բակտերիաններ։ Հիւանդ ծնողներից ժառանգաբար փոխանցւում են ոչ թէ այդ բակտերիանները, այլ կազմւածքի այն փոփոխութիւնները, որոնց շնորհիւ յիշեալ բակտերիանները կարողանում են զարգանալ և բազմանալ սերնդի կազմածքի մէջ։ Այդ բակտե-

րիաները չեն կարող զարգանալ ամեն մի մարմնի մէջ. նրանց զարգացման համար, ինչպէս որ ամեն մի սերմի զարգացման համար, հարկաւոր է որոշ հող և որոշ պայմաններ. ահա այդ հողը և այդ պայմաններն են, որ հիւանդ ծնողների կողմից ժառանգաբար փոխանցւում են նրանց զաւակներին: Ճլերգաւորների զաւակները շատ անգամ ծնուում են ըստ երևոյթին բոլորովին առողջ, բայց համելով մի որոշ հասակի, մանաւանդ արբունքի հասակին, մէկ անգամից սկսում են երեսան գալ ժառանգական հիւանդութեան նշանները: Ոչ մի վիշտ և ոչ մի թշւառութիւն չէ կարող համեմատւել այն ծնողների վշտի հետ, որոնց հասունացած զաւակները նրանց աչքի առաջ մէկմէկու ետեից զոհ են գնում ժառանգական այդ սարսափելի հիւանդութեան: Իսկ այդպիսի գէպքերը կրկնուում են համարեա ամենայն օր:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ հիւանդութեան ազգեցութիւնը սերնդի վրայ աւելի և խիստ է լինում, երբ որ երկու ծնողներն ևս ենթակայ են միւնոյն հիւանդութեան: Այդ գէպքում, ինչպէս փորձը ցոյց է տալիս, զաւակների հիւանդութեան խստութիւնը մինչև անգամ աւելի մեծ է, քան թէ ծնողների հիւանդութեան գումարը: Հենց այդ պատճառով էլ արիւնակից ամուսնութիւններից առաջացած զաւակները ամենից աւելի զոհ են գնում ճլերքին:

Սիֆիլիսը, որը դժբաղդաբար օրէցօր աւելի և աւելի լայն ծաւալ է ստանում ժողովրդի բոլոր խաւերի մէջ, նոյնպէս նշանաւոր տեղ է բռնում ամուսնական առողջապահութեան խնդրում: Այդ հիւանդութիւնը, բացի նրանից որ հեշտութեամբ անցնում է մէկ ամռանից միւսին, միւնոյն ժամանակ սարսափելի վնասակար ազգեցութիւն է գործում սերնդի առողջութեան վրայ: Սիֆիլիսի ազգեցութիւնը ամենից առաջ արտայացտում է նրանով, որ նորան ենթարկւած կանացք վերին աստիճանի ենթակայ են լինում զաւակավիժութեան. վիժումը սովորաբար տեղի է ունենում զղութեան երրորդ կամ չորրորդ ամիսներում, և եթէ երբեմն զղութիւնը հասնում է կատարեալ լրութեան, շատ անգամ ծնուում են մեռած երեխաներ և կամ մեռնում են ծննդեան նոյն իսկ առաջին օրերը: Ոչ մի բան այնպէս սարսափելի տպաւորութիւն չէ գործում մարդու վրայ, ինչպէս սիֆիլիսով վարակւած այդ փոքրիկ էակները, որոնք մեռնում են նախքան լոյս աշխարհ գալը և աշխարհ են գալիս ծածկւածու շաղախւած իրենց ծնողների մեղքի նշաններով: Երբեմն պատահում է, որ սիֆիլիսով հիւանդ ամռասիններից ծնուում են առողջ զաւակներ. բայց մեծ մասամբ նրանք լինում են թոյլ, վաղ թէ ուշ ենթարկւում են ծնողների հիւանդութեան վնասակար հետեւանքներին և, բացի սորանից, ուրիշ երեխաներից աւելի են ենթակայ լինում ճլերքի, անգ-

լիական ախտի և ուրիշ հիւանդութիւնների: Այդ պատճառով մեռնողների թիւ ըստի կազմութիւնների զաւակների մէջ հասնում է չափազանց մեծ քանակութեան:

Բարեբաղդաբար բժշկական գիտութիւնը այժմ արգին գտել է միջոցներ, որոնց շնորհիւ կարողանում է ոչ միայն թեթևացնել, այլ երբեմն նաև բոլորովին ոչնչացնել սիֆիլիսի ազդեցութիւնը թէ ծնողների և թէ նրանց զաւակների առողջութեան վրայ: Այդ պատճառով աւելի ևս դատապարտելի են այն մարդիկ, որոնք, ենթակայ լինելով այդ հիւանդութեան, համարձակւում են ամուսնանալ առանց դիմելու բժշկի խորհրդին և օգուտ քաղելու այն միջոցներից, որ գիտութիւնը մշակել է մարդկացին ցեղի բարօրութեան համար:

Գինեմոլութիւնը (ալքոհոլիզմ) նոյնպէս ահագին նշանակութիւն ունի թէ ամուսինների և թէ սերնդի առողջութեան վերաբերութեամբ: Այդ նշանակութիւնը աւելի ևս մեծանում է, եթէ աչքի առաջ ունենանք, որ գինեմոլութիւնը բոլոր մոլութիւններից ամենից աւելի տարածւածն է: Գինեմոլութիւն սեելով չպէտք է հասկանալ այն պատահական և երբեմնակի հարբեցողութիւնը, որին ենթակայ է համարեա ամեն մի մարդ, այլ այն ախտը, այն իսկական մոլութիւնը, որին ենթարկւած անհատը զգում է անդիմադրելի ձգտումն դէպի ոգելից ըմպելիները: Գիտութիւնը արդէն հաստատել է, որ

գինեմոլների այդ սարսափելի ձգտումը հետևանք է ոչ թէ գաստիարակութեան և շրջանի վատ ազդեցութեան, այլ մեծ մասամբ կազմում է մի առանձին հիւանդութիւն, որը անւանւում է գիտութեան մէջ գինեմոլութիւն (ալքոհոլիզմ): Նատ անգամ օրիորդները վստահանում են ամուսնանալ հարբեցողների հետ, կարծելով, որ սիրով և խնամքով կարող են ուղել իրենց ամուսինների մոլութիւնը. բայց այդ չոյսը մեծ մասամբ զուր է դուրս գալիս—սարսափելի մոլութիւնը վաղ թէ ուշ նորից զարթնում է, և զարթնում է այնպիսի ուժով, որի առաջ տեղի են տալիս բոլոր բարոյական և ֆիզիկական միջոցները:

Բայցի այն բարոյական վնասից, որը մոցնում է գինեմոլութիւնը ընտանեկան երջանկութեան մէջ, և բայցի այն վտանգաւոր հետևանքներից, որոնց ենթակայ է գինեմոլի կեանքը, այդ ախտը սարսափելի ազդեցութիւն ունի նաև սերնդի առողջութեան վրայ: Ոչ մի հիւանդութիւն այնքան չէ նպաստում սերնդի սերհատութեան, որչափ գինեմոլութիւնը, որը, Մագնուսի, Հուսսի, Մօրէլի և ուրիշ գիտնականների սեելով, մի կատարեալ խարազան է հանդիսանում մարդկացին ցեղի համար: Յայտնի է, որ ամբողջ ցեղեր և տէրութիւններ բոլորովին սերհատել, ոչնչացել են գինեմոլութեան շնորհիւ: Այսօր ամբողջ Եւրոպան և աշխարհի բոլոր քաղաքակիրթ ազգերը գինեմոլութեան հարցը

պետական նշանաւոր խնդիր են դարձրել և ամեն օր նորանոր միջոցներ և օրէնքներ են մշակում այդ ախտի դէմ կռւելու համար:

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ գինեմութիւնը վերին աստիճանի ընդունակ է ժառանգաբար փոխանցւելու սերնդին։ Գինեմոլների 50—80 տոկոսը այդ ախտը ժառանգաբար ստանում են իրենց ծնողներից կամ նախնիքներից։ բացի սրանից, գինեմոլների զաւակները չափազանց ենթակայ են ջղալին և հոգեկան այլևայլ հիւանդութիւնների —ապուշութեան, իստերիկայի, լնկնաւորութեան (падучая болезни), կաթւածի (паралич) և այլն և այլն։ Սերնդի վրայ աւելի խիստ է ազդում մայրերի, քան թէ հայրերի գինեմոլութիւնը։ և գուցէ այդ է պատճառը, որ ազգերը միշտ աւելի աններոզամիտ են դէպի հարբեցող կանայք։ կանանց հարբեցողութիւնը աւելի բնական զգւանը է առաջացնում, քան թէ տղամարդկանցը։ Հռոմէական օրէնքով ամուսինը մինչև անգամ իրաւունք ունէր սպանելու հարբեցող կնոջ։

Գինեմոլութիւնը պատկանում է անբուժելի հիւանդութիւնների կարգին։ այդ պատճառով այդ ախտին ենթակայ եղող անձնաւորութիւնները թէ եկեղեցու և թէ պետութեան օրէնքներով պէտք է զրկւին ամուսնանալու իրաւունքից։ Եւ եթէ պատահում է, որ գիտակցաբար կամ անդիտակցաբար տեղի են ունենում այդ տեսակ ամուսնութիւններ, առա-

ողջապահութեան տեսակէտից այդ ամուսնութիւնները պէտք է համարել լուծանելի և ապօրինի։

Խնչ որ վերաբերում է հոգեկան եւ ջղային հիւանդութիւններին, նրանց ազդեցութիւնը սերնդի առողջութեան վրայ այնքան ակներև է, որ նոյն իսկ հասարակ ժողովուրդը խուսափում և դատապարտում է այդ ախտական ամուսնութիւնները։ յայտնի է թէ ինչպէս խիստ է վերաբերում ժողովուրդը ամուսնական ընտրողութեան ժամանակ դէպի վեսացուի և մանաւանդ դէպի հարսնացուի հոգեկան և ջղային արատները։ Այդ վերջին կէտը, այսինքն՝ դէպի հարսնացուի արատները ունեցած խստութիւնը, բացատրում է նորանով, որ հոգեկան ու ջղային հիւանդութիւնները մօր կողմից աւելի յաճախ են փոխանցում սերնդին, քան թէ հօր կողմից։ Եւ այդ շատ հասկանալի է, եթէ աչքի առաջ ունենաք, որ հայրը մասնակցում է միայն զաւակի բեղմնաւորութեան, մինչդեռ մայրը, բացի այդ մասնակցութիւնից, շարունակում է երկար ժամանակ իւր ազդեցութիւնը թէ յղութեան և թէ ստընտութեան շրջաններում։

Հոգեկան և ջղային հիւանդութիւնները, բացի նրանից որ խախտում են ընտանեկան կեանքի խաղաղութիւնը և բախտաւորութիւնը, միւնոյն ժամանակ, ինչպէս ցիշեցինք, սարսափելի մնասակար ազդեցութիւն են գործում սերնդի առողջութեան վրայ։ Այդ ազդեցութիւնը աւելի ևս սաստկանում

է, երբ այդ հիւանդութիւնները փոխանցւում են զաւակներին միաժամանակ թէ հօր և թէ մօր կողմից, ինչպէս որ այդ տեղի է ունենում արիւնակից ամուսնութիւնների դէպէռում:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ հոգեկան ու ջղային հիւանդութիւնները փոխանցւելով սերնդին, ենթարկում են զանազան փոփոխութիւնների: Այդպէս օրինակ իստերիկայով հիւանդ ծնողների զաւակները, փոխանակ իստերիկայից, ենթարկում են մելամաղձութեան, ընկնաւորութեան, խելացնորութեան: Խելացնոր ծնողներից կարող են ծնւել հոգեկան առողջ, բայց ջղային խանգարմունքների ենթակայ զաւակներ: Նոյն իսկ միւնոյն հոգեկան և ջղային հիւանդութիւնն ունեցող զաւակներից ամեն մէկը կարող է ունենալ զանազան տեսակի հիւանդութիւն. մէկ որդին կարող է լինել իստերիկ, միւսը մելամաղձու, երրորդը խելացնոր, չորրորդը անգամալոյն ևայն ևայն. Մի խօսքով, բաւական է որ ծնողներից մէկնում մէկը կամ երկուսը միասին ենթակայ լինեն որևիցէ հոգեկան կամ ջղային խանգարմունքի—և ահա նրանց սերնդի մէջ երեան են զալիս այդ հիւանդութիւնների բոլոր տեսակները. բացի սրանից, հոգեկան և ջղային հիւանդութիւնների ժառանգականութիւնը շատ անգամ կատարում է ոչ թէ անմիջապէս ծնողների, այլ և հօր և մօր մերձաւոր արիւնակիցների կողմից: Այդ պատճառով մէկի ժառանգական յատկութիւն-

ները իմանալու համար հարկաւոր է ուշադրութիւն դարձնել ոչ միայն նորա ծնողների, այլ և նորա մերձաւոր ազգականների առողջութեան վրայ:

Մի քանի գիտնականների վիճակագրական հետազօտութիւնից երեսում է, որ հոգեկան ու ջղային հիւանդների  $90^{\circ}/0^{\circ}$ -ը իրանց հիւանդութիւնը ստացել են ժառանգականութեան միջոցով.<sup>1)</sup> Այդ թիւը արդէն ինքնըստինքեան բաւական է ցոյց տալու համար, թէ ինչ սարսափելի պատասխանատուութիւն են վերցնում իրենց խղճի վրայ այն անձինք, որոնք ենթակայ լինելով այդ տեսակ հիւանդութիւնների՝ իրաւունք են համարում ամուսնանալու և սերունդ առաջացնելու: Այդ տեսակ անձնաւորութիւնները իրենք իրենց ձեռքով թշւառութեան և չարչարանքների դուռ են բաց անում իրենց զաւակների առաջ. մի դուռ, որ առաջնորդում է նրանց դէպի գերեզման և դէպի անխուսափելի կորուստ:

Բացի այն հիւանդութիւններից, որոնց մասին համառօտ կերպով յիշատակեցինք, կան և ուրիշ բազմաթիւ հիւանդութիւններ, որոնք եթէ բոլորովին ել արգելք չեն ամուսնութեան համար, այնուամենայնիւ ցանկալի է խուսափել նրանցից: Այդ այն հիւ-

<sup>1)</sup> Այդ հիւանդութիւնների, ինչպէս և առհասարակ ժառանգականութեան մասին ընթերցողները կարող են աւելի մանրամասն տեղեկութիւններ ստունալ մեր «Ժառանգականութիւն» վերնագրով լողւածից, որը տպւածէ Մուրճ 1895, № 5:

ւանդութիւններն են, որոնք թէև ժառանգական չեն, բայց ազդում են ամուսինների առողջութեան և բախտաւորութեան վրայ: Ամուսնական կենակցութիւնը այդ հիւանդութիւնների շնորհիւ, փոխանակ բախտաւորութեան, դառնում է չարչարանքի և փոխադարձ ընդհարութների անսպառ աղբիւր: Մենք կանք չենք առնում այդ հիւանդութիւնների վրայ, որովհետեւ այդ շատ հեռու կ'տանէր մեզ մեր յօդածի ծաւալից: Հոգեկան և ջղացին՝ ինչպէս և միւս ժառանգական հիւանդութիւնների վերաբերութեամբ թէ պետական օրէնսդրութիւնը և թէ եկեղեցական կանոնադրութիւնը չափազանց ներողամիտ (եթէ չասենք չափազանց անհոգ) են հանդիսացել: Մեր եկեղեցական օրէնքով միայն մի հիւանդութիւն՝ այն է դիւահարութիւնը (խելացնորութիւն) ոչմիայն արգելառիթ պատճառ է համար ւում ամուսնութեան համար, այլև այդ տեսակ հիւանդների արդէն կատարւած ամուսնութիւնը թույլատրւում է լուծանել՝ իրաւունք տալով առողջ ամուսնին նոր ամուսնութիւն կատարելու: Ահա թէ ինչ է ասում այդ մասին Մխիթար Գօշը իւր ՌԵՆՔԻ յօդւածում: «Եթէ պատահի առն և կամ կնոջ դիւահարիլ, քննել արժան է. եթէ յառաջքան զպսակն էր և ծածկեցաւ խարէութեամբ ծնողացն կնոջն՝ ի տունս իւրեանց առցին մինչև բժշկեսցի և ապա դարձցի յայրն իւր եթէ կամեսցի այրն. ապա թէ ոչ կամեսցի, իշխան լիցի արձակել

զնա: Ապա թէ ի տան առն պատահի դիւահարի՝ այրն հոգասցէ մինչև բժշկեսցի. ապա թէ յետ եօթն ամի ոչ բժշկեսցի, իշխան լիցի այրն արձակել զնա և առցէ այլ կին... նոյն դատաստան լիցի եթէ առն պատահի ախտն»:

Այդ յօդւածը, ինչքան էլ որ պակասաւոր լինի, նշանաւոր է նորանով, որ ցոյց է տալիս, թէ եկեղեցին սկզբունքով ոչ միայն ընդունում է առողջապահական պայմանների նշանակութիւնը ամուսնական օրինաւորութեան մասին, այլև իրաւացի է գտնում այդ պայմանների հակառակ կատարւած ամուսնութիւնները լուծանելի համարել: Այդ պատճառով ամեն մի բարենորդութիւն, որը հիմնած կը լինի գիտութեան մշակած օրէնքների և փորձերի վրայ, կարող է և պէտք է մուտք գործէ եկեղեցական օրէնսդրութեան մէջ:

Այն ամենից, ինչոր ասացինք ամուսնական առողջապահութեան մասին, երևում է, որ թէ եկեղեցական կանոնադրութիւնը, թէ պետական օրէնսդրութիւնը և թէ ժողովրդական աւանդութիւնը շատ թերի և անկատար են գիտութեան տեսակետից: Ինչպէս յայտնի է ընթերցողներին, պետական օրէնսդրութիւնը այդ բանը արդէն նկատել է և արդէն ձեռնամուխ է եղել նշանաւոր բարեփոխութիւնների, որոնք հիմնած պէտք է լինին դլխաւորապէս առողջապահութեան և գիտութեան ցուցմունքների վրայ: Հարկաւոր է, որ եկեղեցին

ևս յետ չմնայ ժամանակի և կեանքի պահանջից և  
իւր բարձր հեղինակութեամբ գայ սրբագործելու  
այն հիմունքները, որոնց նպատակն է պաշտպանել  
ապագայ սերունդը Փիզիկական և հոգեկան տան-  
ջանքներից, նպաստել մարդկացին ցեղի կատարելա-  
գործութեան և բարելաւութեան:

Է.

**ՄԵզ** մնում է մի քանի խօսք ասել ամուսնա-  
կան առողջապահութեան մի ուրիշ նշանաւոր պայ-  
մանի մասին, որը ահագին նշանակութիւն ունի  
թէ ամուսինների և թէ նրանց զաւակների առող-  
ջութեան համար: Այդ պայմանն է սէրը: Ամենքին  
յայտնի ճշմարտութիւն է, որ առանց սիրոյ չկայ և  
չէ կարող լինել ամուսնական երջանկութիւն: Բայց  
սէր ասելով չպէտք է հասկանալ միայն սեռական սիրոյ  
զգացմունքը: Ճշմարիտ է, սեռական զգացմունքը  
կազմում է սիրոյ գլխաւոր տարրը, նորա հիմքը,  
նորա ուղ և ծուծը, բայց միենոյն ժամանակ սէրը  
չէ կարող կատարեալ լինել, եթէ այդ սեռական  
տարրը միացած չէ փոխադարձ յարգանքի, մոքի,  
զգացմունքների, զաղափարների և բնաւորութիւն-  
ների ներդաշնակութեան և համերաշխութեան հետ:  
Ահա այդ տեսակ սէրն է, որ կարող է հիմք լի-  
նել ամուսնական երջանկութեան և բախտաւորու-  
թեան համար: Խնչքան աւելի սառը է մարդկանց  
մտաւոր զարգացումը, ինչքան աւելի նեղ է նրանց

աշխարհայեցողութիւնը, նրանց հոգեկան պահանջ-  
ների սահմանը, այնքան աւելի պարզ և հասարակ է  
նրանց սէրը: Այդ է պատճառը, որ հասարակ գիւ-  
ղացին աւելի յածախ երջանիկ է լինում ամուս-  
նութեան մէջ. գիւղացի տղամարդու և գիւղացի  
կնոջ աշխարհայեցողութիւնը և զաղափարները շատ  
քիչ են տարբերում կամ, աւելի ուղիղն ասած,  
ամենեին չեն տարբերում իրարից. նորա համար  
էլ ամուսնական դժկամակութիւնները առիթ չունին  
այնտեղ զարգանալու. ընդհակառակը ինչքան աւելի  
քաղաքակրթւած է մի դասակարգ, ինչքան աւելի  
լայն և լինդարձակ են նորա մտաւոր և հոգեկան  
կեանքի սահմանները, այնքան բարդ և խստա-  
պահանջ է նաև նորա սէրը: Եւ այդ է գլխաւոր  
պատճառներից մէկը, որ քաղաքակրթւած դասա-  
կարգի մէջ ամուսնական երջանկութիւնը աւելի  
դժւար է ձեռք բերում:

Այդպէս ուրեմն, ամուսնական երջանկութեան  
գլխաւոր տարրը կազմում է սէրը, այն սէրը, որը  
բղխում է ամուսնացողների Փիզիկական և հոգեկան  
յատկութիւնների ներդաշնակութիւնից, որը չէ  
գնւում և որը չէ վաճառւում, որը չէ պայմա-  
նաւորում նիւթական և փառասիրական շահերով:  
Մատողահաս և աղքատ օրիորդը շատ անգամ երևա-  
կայում է, որ կարող է սիրել և արդէն, իսկ սի-  
րում է 60 տարեկան հարուստ ծերունուն. բայց  
իսկապէս նա սիրում է միայն իւր փառասիրական

և նեղ եսական ձգտումները, որոնց յոյս ունի իրագործել հարուստ ամուսնի միջոցով։ Նա ամուսնանում է ծերունու հետ և դառնում է կամ անբախտ կամ անառակի։ Նոյնը պատահում է նաև տղամարդկանց հետ, որոնք ամուսնութեան խնդրում դեկավարում են միմիայն դրամական և ուրիշ նիւթական շահերով։

Մի կողմ թողնելով այդ տեսակ ամուսնութիւնների բարոյական նշանակութիւնը, զուտ առողջապահական տեսակէտից ևս սէրը կազմում է ամուսնութեան գլխաւոր պայմաններից մէկը։

Սիրոյ բացակայութիւնը քայքայում է ամուսինների առողջութիւնը։ Կատարելով իրենց ամուսնական պարտականութիւնը առանց այն զգացմունքի, որը բնական ոյժով մղում է ամուսիններին, իրարութիրկը, այդ տեսակ ամուսինները հարստահարում են իրենց կազմւածքը, գրգռում են ջղերը և, փոխանակ բաւականութեան, ստանում են միմիայն զգւանք և ոյժերի ընդհանուր թուլութիւն։ Ամենօրեաց փորձը ցոյց է տալիս, որ բռնի ամուսնացածները շատ շուտով թառամում են և մեծ մասմբ զոհ են դառնում՝ վաղահաս մահւան։

Այդ տեսակ ամուսնութիւններից ծնւած զաւակները աշքի են ընկնում իրենց թոյլ և հիւանդու կազմւածքով, մտաւոր կարողութիւնների, կամքի և եռանդի անհաստատութեամբ։ Ընդհակառակը սիրոյ վրայ հիմնւած ամուսնութիւններից առաջանում են աւելի առողջ, աւելի կայտառ և աւելի

երկարակեաց զաւակներ։ Սորան լաւ ապացոյց կարող են համարել ապօրինի զաւակները կամ, ինչպէս ժողովուրդը անւանում է, պիճերը։ Նրանք մեծ մասամբ լինում են աւելի դիմացկուն, աւելի առողջ և օժտւած աւելի մեծ մտաւոր ընդունակութիւններով։ զուր չէ ժողովուրդը խելօքութեան և պիճութեան գաղափարները նոյնացնում և խելօք մարդուն պիճ անւանում։ Պիճերը իրենց այդ առաւելութիւններով պարտական են այն հանգամանքին, որ նրանց ծնունդը մեծ մասամբ հետևանք է ջերմ և անխառն սիրոյ։ Թէ ինչ մեծ նշանակութիւն ունի սիրոյ ջերմութիւնը սերնդի առողջութեան վրայ, այդ յայտնի էր նաև հին հռոմէացիներին, որոնց մէջ առակի կարգ էր սնցել այն համողմունքը թէ „quo fervidius Venus—eo robustior proles“ (ինչքան աւելի տաք է սէրը, այնքան աւելի ուժեղ է մանուկը)։ Յայտնի է նաև, թէ ինչ ահազին դեր են կատարել ընդհանուր մարդկացին պատմութեան մէջ ապօրինի զաւակներից մի քանիսը... Մի խօսքով, սէրը կազմում է ամուսնական առողջապահութեան գլխաւոր տարրերից մէկը։ Նա անհրաժեշտ է ոչ միայն ընտանեկան կեանքի, այլ և ամուսինների և նրանց սերնդի բարօրութեան համար։ Նշանաւոր Ռընանը իւր ուսանողների խօսած ճառերից մէկում ասում է—«Մի պղծէք սէրը, որը բոլոր զգացմունքներից ամենավեհն է այս աշխարհի վրայ։ նորանից է կախւած

2429

մարդկութեան գոյութիւնը... Ես համոզւած եմ,  
որ կը գայ ժամանակ, երբ կը փոխւին ամուսնու-  
թեան կրօնական և օրէնսդրական հիմունքները, բայց  
կայ մի ճշմարտութիւն, որը յաւիտեան կը մնայ: Այդ  
ճշմարտութիւնը այն արդիւնքն է, որը բղխում է  
երկու սեռերի փոխազարձ միաւորութիւններից: Ամեն  
մարդու սրբազնն պարտականութիւնն է առանց  
թեթևամտութեան, խորին լրջութեամբ վերաբեր-  
ւել դէպի այդ միաւորութիւնը, որ ամենանշանա-  
ւոր տարրն է մարդկութեան ապագայի համար: Ա  
նընանի ցիշած այդ լուրջ վերաբերութիւնը կարող  
է իրավործւել միայն այն ժամանակ, երբ ամուսնա-  
կան ընտրութիւնները տեղի կ'ունենան այն պա-  
հանջների հիման վրայ, որը մշակել է և շարունա-  
կում է մշակել գիտութիւնը՝ իրեն առաջնորդ ու-  
նենալով բնութեան անխախտ և անսասան օրէնք-  
ները: Եւ այդ ժամանակ է, որ ամուսնութիւնը  
կը դառնայ աստւածադիր խորհուրդ, որի պատւի-  
րանքն է լուսացնելու և բազմացարձութ և լցէք զեր-  
կիրա:



ԳԻՆԻ Է 20 ԿՈՊԵԿ

Դիմել՝ Տիֆլիս. Վъ Редакцію „Мурчъ“.

## ՄՈՒՐՃ

ՖԱԼԱԳԱԿԱՆ-ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ռ Ա Կ Թ Ի

տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի:

Ինչ ամսում և բաժանորդ գրւելու լինեն—  
կարելի է ստանալ յունւարի համարից:

Վաճառւում է նաև անցած տարիների Մուրճը,  
կազմաձև և չկազմաձև:

Դիմել՝ Տիֆլիս. Վъ Редакцію журнала МУРЧЪ.

1194  
14

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0072399

